Երկնաւոր թագաւորիդ՝ 'ի ծունր իջեալ խաղ առնէին․ ծածկեալ ըզ գլուխըդ կոփէին՝ և եղեգամբ հարկանէին․ և զիմ անկեալն մինչ 'ի դետին՝ 'ի հնազանդիլ կամաց չարին․

նո

մի՛ թողուցուս խաղալ սովքին՝ այլ
կանգնեսցես զիս՝ վերստին։
Ռա°մեալ բոլորդ քո մարմին՝ յետ մը
ճըռոյ գտ՟ուրին՝ . սաստիկ էառ զհար
ուած գանին՝ վասն գինից նախաստեղ
ծին՝ . զիս որ յոտից մինչև ցգլուխ՝
ցաւօք նեղիմ անհընարին՝ . առողջացո՛
դարձեալ կրկին՝ ով շնորհօք յաւե՟նին։
Ս°րբափայլ պճնեալ զարդուն՝ զոր
զգեցուցեր ահարօնին՝ . փոխան այլ
սակ 'ի փշոց եդին՝ մըշակք այգւոյն
իսրայէլին՝ . ըզ փուշ մեղաց հանցես
յինէն՝ զոր յիս էհար իմ թշնամին՝ .
և ողջացո՛ զխայթուած վէրին՝ զի
սպեղք մեղացըն ջնջեսցին։

Որհն՟։ Նշ՟րն Մաղթեսս։ յժը։ 27. 1։
Խերեւ աջէ եղեւ։ Վէրքն, և հայք որդ–այն զէ"։

Լ°տուն ըմպել քեզ ըզլեղին՝ և ըզ
քացախն 'ի ծարաւին՝ . արբեր՝ կա
մաւ զի քաղցրացին՝ ճաշակք պըտ
ղոյն դառնագունին՝ . ըզդառնուի
թունաւորին՝ զոր 'ի մասունս հոգւոյս
արկին՝ . հերքեա՛ 'ի բաց հանդերձ սո
վին

վին՝ և քաղցրացի սէր քո 'ի սմին։
Ստեղնել ծառոյ մահաբերին՝ այնմ
որ բուսաւ 'ի մէջ դրախտին՝․ փոխան
բարձեր ընդփայտ խաչին՝ 'ի գողգոթայ
հաներ տեղին՝․ զիմ առ 'ի մեղս ան-
կել ղոդի՝ և ծանրագոյն բարձօղ բե-
ռին՝․ բարձ 'ի յուսիդ ըստ ոչխարին՝
հան 'ի յերկինս յուխտեալ տեղին։
'Ի° յուրբաթու ժամ երրորդին՝ բև-
եռեցար տր 'ի խաչին՝․ լուծեր զկա-
պանս նախաստեղծին՝ և կապեցեր
ըղթշնամին՝․ զիս ամրացո ընդ հովա-
նեաւ կենդանարար քո նշանին՝․
և 'ի ծագին յարևելից՝ լուսաւո-
րեա լուսով նորին։

Ի°րանեաւ աւազակին՝ բացեր ըղ-
դուռն ադենին դրախտին՝ ըստ հաւա-
տոյ սրտի նորին՝ կատարեցեր ըղ-
խնդրելին՝․ տուր և ինձ տր ընդ նը-
մին՝ լսել ըղնոյն պատասխանին՝․
այսօր ընդ իս իցես յադենին 'ի հայրե-
նիս քո առաջին։

Օրհնէ։ [illegible] Ձ̄ն 15․ 2։
[illegible]

Նայ

Բարբառելով զէլի էլին՝ հիմունք երկրի տատանէին․ և վարագոյր հին օրինին՝ վերուստ 'ի վայր պատառէին․ արդ ընդ վիմացն որք շարժէին՝ շարժեա զանշարժ սիրտս 'ի բարին․ ընդ պատառելոյ վարագուրին՝ զիմ պատառեա ըզգիր պարտին․

Արեգական լոյս քօղ արկեալ՝ խաւարնայր միջօրէին․ և գերեզմանք բանային՝ մարմինք սրբոցն յառնէին․ ընդ խաւարել լուսաւորացն՝ մաքրեա յինէն զգործ խաւարին․ ընդ մեռելոցն որք յառնէին՝ կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս։

Նոր սիրոյ պատուիրանին՝ գործով լըցող եղեր բանին․ աղօթելով առ հայր յերկինս՝ թողուլ ըզ մեղս որ 'ի խաչին․ ինձ որ հոգւով հաւատացեալ՝ երկըրպագեմ քեզ միածին․ թող ըզ լուծումըն հրամանին՝ մի' յիշեսցին մեղքն առաջին։

Սարսեցին սանդարամետք՝ 'ի յաւանդելն առ հայր զհոգիդ․ որ 'ի դժոխս իջեր ներքին՝ 'ի բանտ մահու և խաւարին. կապեալ զիշխանութիւն մահածին՝ հաներ զհոգիսն որք ՚ի բանտին. և զմեզ հանցես որ ընդ նոսին բանտէ մեղացն աղջամղջին:

ՄԵՐԷՆ: ԼՈՒՍԻՆ Գ. ուշտա: Միլէ: 22. 66:
Որ ներքին այց եղեւ: Վերջ, տեառնէին զայն:

Աղբերայն անմեղկան՝ որ յետ մահուն անմահարար. բղխեալ ՚ի քէն վտակ կենդին՝ ՚ի նորոգումն կողածնին. բայց ընդերան իմ յարձուցումն քոյ արեան կենարարին. լուա՛ դարձեալ յաւազանին՝ թէ ոչ շնորհօք այլ արտասուօք:

Յանմահիդ մեռանելոյ՝ զմեռեալ հոգիս կենդանացո՛. Թաղմամբ ՚ի նոր գերեզմանի՝ զթաղեալս ՚ի մեղս վերածեա՛. ՚ի գբի ներքնումն իջանելով՝ ՚ի գբոյ մեղաց վերաբերեա՛. ՚ի սանդեր մահու քո բնակելով՝ լուսաւորեա՛ և զիս հոգւով:

Սիրտ իմ առ քեզ աղաղակէ՝ Բանդ որ ընդ Հօր ՚ի սկզբանէ. որ կամաւոր վասըն մարդկան՝ կրեցեր մարմնով

զայս տ͞ր՝ ինձ լսելի արա ըղձոյն՝
յարքայութեանդ քո կոչման. ընդ
ժողովոց անդ անդրանկացն՝ օրհնել
ըզքեզ միշտ յաւիտեան։

Օ[illegible] Այսօր [illegible] [illegible] սաղմոս նը-
ցորդ, Նշանեցաւ առ": Քանզի՝ ՚Ի [illegible]
դալ [illegible] շնորհաց"։

Եւ այս ընթերցեալ լինի աւետարան խաչե-լութե ըստ յայտնին։ Եւ լինի [illegible] շարականն՝ Եւ բոգօղ։ Իսկ ոմանք զաւետարանին շարականն [illegible] ասեն. և ոմանք զնորոգօղն [illegible] ասեն [illegible] քո է։ [illegible] յորժամ [illegible] շարականն Հանգստեան ասեն՝ լինի [illegible] [illegible] սաղմոս ըստ յայտնին. և ընթերցեալ լինի աւետարան ըստ յայտնին. և լինի աւետարանին [illegible] [illegible] [illegible] մի։ լինի [illegible] Հոգւոց հանգուցելոց։ Եւ ոմանք ընդ [illegible] երբեմն երբեմն կցորդեն [illegible] և մարդասէրն զի [illegible]. և կամ Եւս ասացեն զի [illegible]. [illegible] քո է։ Եւ այս Հոգւոց հան-գուս"։ Ք͞ս որդի ա͞յ. և Հայր
մեր որ եր"։

⁂

Աւր

Սաղմոսք ըստ չայնեցին նախ քան զառաւօտինն.

Տէրունի աւուրց։

Տէր մի՛ կացցէ 'ի"։ տե՛ս 384 չերեսն։

ակ

Տէ՛ր մի՛ սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի՛ բարկութեամբ քով խրատեր զիս։ Ողորմեա ինձ Տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռովեցան ոսկերք իմ։ Անձն իմ յոյժ խռովեցաւ, և դու Տէր՝ մինչև յե՞րբ. Դարձ Տէր և փրկեա զանձն իմ. կեցո՛ զիս Տէ՛ր՝ վասն ողորմութեան քում։

Զի ո՛չ ոք է՝ որ 'ի մահու յիշէ զքեզ. կամ 'ի դժոխս խոստովան լինիցի առ քեզ։

Աշխատեցայ ես 'ի հեծութեան իմում. լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի։ Խռովեցաւ 'ի սրտմտութենէ ակն իմ. և մաշեցայ ես 'ի վերայ ամենայն թշնամեաց իմոց։ 'Ի բա՛ց կացէք յինէն ամենեքեան. որք գործէք զանօրէնութիւն։

Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ. լուաւ Տէր աղօթից իմոց, և Տէր զխնդրուածս իմ ընկալաւ.

Ամաչեսցեն և խռովեսցին յոյժ ամենայն

Թշնամիք իմ. դարձցին յետս եւ ամաչեսցեն յոյժ վաղվաղակի եւ խռովեսցին:

Բարձր առնեմ զքեզ տ̅ր, զի ընկալար զիս. եւ ոչ ուրախ արարեր զթշնամիս իմ յիս: ա̅ծ

Տ̅ր ա̅ծ իմ՝ կարդացի առ քեզ, եւ բժշկեցեր զիս. տ̅ր հաներ ՚ի դժոխոց զանձն իմ. եւ փրկեցեր զիս յայնցանէ, որք իջանեն ՚ի գուբ:

Սաղմոս ա̅ս̅ցէք տ̅ն ս̅բ̅ք ն̅ր. եւ խոստովան եղերուք յիշատակի սրբութե̅ ն̅ր:

Սրտմտութի̅ է ՚ի բարկութե̅ ն̅ր. եւ կեանք են ՚ի կամաց նորա:

Ընդ երեկոյս հանգիցեն լալիք. առաւօտու եղիցի ուրախութի̅:

Ես ասացի ՚ի բարեկենդանութե̅ իմում, թէ ոչ սասանեցայց յաւիտ̅ն:

Տ̅ր ՚ի կամս քո ետուր գեղոյ իմոյ զօրութի̅, դարձուցեր զերեսս քո յինէն՝ եւ ես եղէ խռովեալ:

Առ քեզ տ̅ր կարդացի, եւ առ ա̅ծ իմ աղաղակեցի. զի՞նչ օգուտ է քեզ յարենէ իմմէ, թէ իջանեմ ես յապականութի̅:

Մի՞ թէ հող խոստ՟վն տանիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշմարտութիւն քո:

Լուաւ ինձ տ՟ր՝ եւ ողորմեցաւ. եւ տէր եղեւ ինձ օգնական:

Դարձոյց զսուգ իմ յուրախութի՟, էջերծ յինէն զքուրձ. եւ ինձ զգեցոյց զուրախութիւն:

Զի սաղմոս ասասցեն քեզ փառք իմ. եւ ոչ մի՛ եւս զղջացայց. տ՟ր ա՟ծ իմ յաւիտեն խոստովան եղէց քեզ:

ծգ Ա՟ծ յանուն քում կեցո՛ զիս, եւ՚ի զօրութե՟ քում իրաւ արա ինձ:

Ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց. ունկնդիր բանից բերանոյ իմոյ:

Օտարք յարեան ՚ի վ՟ր իմ. եւ հզօրք խնդրեցին զանձն իմ, եւ ո՛չ համարեցան զա՟ծ առաջի իւրեանց:

Ահա ա՟ծ օգնական իմ. եւ տ՟ր ընդունող հոգւոյ իմոյ:

Դարձուցանել զչարն ՚ի թշնամիսն իմ, ճշմարտութ՟բ քով սատակեա զն՟ս:

Ես կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. եւ խոստովան եղէց անուան քում տէր, զի բարի է:

Ա՟ծ

Յա՟մ նեղութ՟է իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Ա՟ծ ողորմեա՛ մեզ և օրհնեա՛ զմեզ. երևեցո՛ զերեսս քո ՚ի մեզ՝ և ողորմեա՛ մեզ։ բկ

Ճանաչել յերկրի զճանապարհս քո, յազգիս ա՟մ զփրկութ՟իս քո։

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա՟ծ, խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա՟մ։

Ուրախ եղիցին և ցնծասցեն ազինք. զի դու դատես զժողովուրդս ուղղութ՟ե. և ազգաց երկրի դու առաջնորդես.

Խոստովան եղիցին առ քեզ ժողովուրդք ա՟ծ. գոհասցին զքեն ժողովուրդք ա՟մ։

Երկիր ետ զպտուղ իւր, և օրհնեաց զմեզ ա՟ծ ա՟ծ մեր։

Ա՟ծ մեր օրհնեսցէ զմեզ, և ՚ի նմանէ երկիցեն ա՟մ ծագք երկրի.

Հաճեցար տէր ընդ երկիր քո, և դարձուցեր զգերութ՟ի յակոբայ։ դձ

Թողեր զանիրաւութ՟ի ժողովրդեան քո, և ծածկեցեր զա՟մ մեղս ն՟ց։

Լռեցուցեր զա՟մ սրտմտութի՟ս քո, և
դարձար 'ի բարկութ՟է սրտմտութե՟ քո։
Դա՛րձ առ մեզ Ա՟ծ փրկիչ մեր, և
դարձո՛ զսրտմտութի՟ս քո 'ի մէնջ։
Մի՛ յաւիտեան բարկանար մեզ Տ՟ր.
և մի՛ ձգեր զբարկութի՟ քո ազգէ
մինչև յազգ։
Տ՟ր՝ դու դարձե՟լ կեցուսցես զմեզ. և
ժողովուրդ քո ուրախ եղիցի 'ի քեզ։
Ցո՛յց մեզ Տ՟ր զողորմութիւնս քո,
և զփրկութիւնս քո տո՛ւր մեզ։
Լո՛ւայց զի՟նչ խօսի Տ՟ր Ա՟ծ մեր. խօ-
սեսցի զխաղաղութի՟ ժողովրդեան
իւրոյ առ ս՟բս իւր՝ և առ այնոսիկ,
որք դարձեալ են առ նա սրտիւք։
Սակայն՝ մերձ է առ երկիւղածս իւր
փրկութի՟ ն՟ր. բնակել փառաց ն՟ր
յերկրի մերում։
Ողորմութի՟ և ճշմարտութի՟ պատա-
հեսցին. արդարութի՟ և խաղաղութի՟
համբուրեսցին։
Ճշմարտութի՟ յերկրէ բուսաւ. ար-
դարութի՟ յերկնից երևեցաւ։
Տ՟ր տացէ զքաղցրութի՟, և երկիր

մեր տացէ զպտուղ իւր. արդարութի̃ առաջի նր̃ գնասցէ. դիցէ ՚ի ճանապարհի զգնացս իւր։

գկ Տ̃ր՝ լուր աղօթից իմոց. աղաղակ իմ առ քեզ եկեսցէ. և մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն։

Յաւուր նեղութե̃ իմոյ՝ խոնարհեցո՛ առ իս զունկն քո. յորում աւուր կարդամ առ քեզ՝ վաղվաղակի լուր ինձ։

Սպառեցան ո̃պ ծուխ աւուրք իմ. և ոսկերք իմ ո̃պ խուփ չորացան։

Հարայ ես ո̃պ խոտ՝ և ցամաքեցաւ սիրտ իմ. մոռացայ ուտել զհաց իմ ՚ի ձայնէ հեծութե̃ իմոյ։

Կցեցաւ ոսկր իմ ՚ի մարմին իմ. նըմանեցայ ես հաւալուսան անապատի։

Եղէ ես ո̃պ բու յաւերակի. տքնեցայ՝ և եղէ ես ո̃պ ճնճղուկ միայն ՚ի տանիս։

Նախատեցին զիս թշնամիք իմ զօրհանպզ, և գովիչք իմ ինև երդնուին։

Զմոխիր ո̃պ զհաց կերի. և զըմպելին իմ արտասուօք խառնեցի։

Յերեսաց բարկութեան սրտմտութեան քո, զի դու բարձրացուցեր և և խոնարհեցուցեր զիս։

Աւուրք իմ ո̅պ հովանի անցին․ և ես ո̅պ խոտ ցամաքեցայ։

Դու տ̅ր յաւիտեան կաս, և յիշատակ քո ազգէ մինչև յազգ։

Դու յարուցեալ գթասցիս ՚ի վ̅ր սիոնի․ ժամանակ գթալոյ նորա հասեալ է ժամ։

դ․ձ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տ̅ր․ ըստ բանի քում իմաստուն արա զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տ̅ր․ և բանիւ քով փրկեա զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւն քո յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո․ զի ա̅մ պատուիրանք քո արդարութ̅ են։

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս․ զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութեան քում տ̅ր․ և օրէնք քո խօսք իմ էին։

Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ․ և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մո

Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո, զի ըզպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

Տէրունի աւուրց. տօնին՝ 6։

Ի խաչոց կարդացի՛։ տես 280 երեսն

Տէ՛ր լո՛ւր աղօթից իմոց. ունկն դիր խնդրուածոց իմոց ճշմարտութեամբ քով։ դկ
Լո՛ւր ինձ արդարութեամբ քով, և մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայի քում. զի ո՛չ արդարանայ առաջի քո ամենայն կենդանի։ Հալածեաց թշնամին զանձն իմ. խոնարհ արար յերկիր զկեանս իմ. և նստոյց զիս ի խաւարի որպէս մեռեալս յաւիտենից։ Ձանձրացաւ յիս հոգի իմ. և սիրտ իմ խռովեցաւ յիս. Յիշեցի զաւուրսն զառաջինս. խորհեցայ յամենայն գործս քո. յարարածս ձեռաց քոց խորհեցայ, և համբարձի առ քեզ զձեռս իմ։ Անձն իմ որպէս երկիր ծարաւի է առ քեզ. վաղվաղակի լո՛ւր ինձ Տէր, զի նուաղեցաւ յինէն հոգի իմ։

Մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. նմանեցայց իմ այնոցիկ, որք իջանեն ի գուբ։

Լսելի՛ արա ինձ առաւօտու զողոր

մութիւնս քո . զի ես ՚ի քեզ տէր յուսացայ։
Ցոյց ինձ ճանապարհ՝ յոր և գնացից .
զի առ քեզ տէր համբարձի զանձն իմ։
Փրկեա զիս ՚ի թշնամեաց իմոց տէր .
զի զքեզ ապաւէն ինձ արարի։
Ուսո ինձ առնել զկամս քո . զի դու
ես Աստուած իմ։
Հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ
՚ի յերկիր ուղիղ։
Վասն անուան քո տէր՝ կեցուսցես
զիս . արդարութեամբ քով հանցես ՚ի
նեղութենէ զանձն իմ։
Ողորմութեամբ քով սատակեա զթշնամիս իմ . և կորո՛ զամենայն նեղիչս անձին
իմոյ . զի ես ծառայ քո եմ։

* * *

Զկնի Սաղմոսացս՝ ընթերցեալ լինի աւետարան ըստ ձայնին։

Աւետարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի։

13 . 16 ։

բկ
գկ

Յայնժամ թողեալ յիսուս զժողովուրդսն , եկն ՚ի տուն . մատեան առ նա աշակերտքն նորա՝ և ասեն . մեկնեա մեզ զառակ

որո

որոմանցն ագարակին։ Նա պ՟տասխանի ետ՝ և ասէ ցնս՟. որ սերմանէ զսերմն բարի՝ է որդի մարդոյ։ Եւ ագարակն աշխարհս է. սերմն բարի նոքա են, որք որդիքն արքայութեան են. իսկ որոմն որդիք չարին են։ Եւ թշնամին որ վարեաց զայն, սատանայ է. և հունձն կատարած աշխարհիս է. և հնձօղքն հրեշտակք են։ Ո՟պ ժողովի որոմն և ի հուր այրի. այնպէս եղիցի ի կատարած աշխարհիս։

Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտակս իւր. և ժողովեսցեն յարքայութենէ նր՟ զա՟մ գայթակղութիւնս և զայնոսիկ որք գործեն զանօրէնութիւն։ Եւ արկցեն զնս՟ ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ՝ և կրճել ատամանց։

Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութե՟ երկնից. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։

Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագարակի՝ զոր գտեալ մարդոյ թաքոյց՝ և ի խնդութենէ անտի երթայ վաճառէ զա՟մ ինչ՝ զոր ունի. և գնէ զագարակն զայն։ Պարզեալ՝ նման է արքայութ՟ի երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառե՟ց զա՟մ զոր ինչ ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ։ Պարզեալ՝ նման է արքայութ՟ի երկնից ուռկանի արկելոյ ՚ի ծով՝ և յա՟մ ազգաց ժողովելոյ։ Որ իբրև լցաւ, հանեալ ՚ի ցամաք՝ և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս՝ և զխոտանն ՚ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց։ Եւ արկցեն զն՟ո ՚ի հնոց հրոյ. անդ եղիցի լալ և կրճել ատամանց։ Ասէ ցնոսա յ՟ս՝ իմացայք զայս ա՟մ. ասեն ցնա. այո տ՟ր։ Եւ նա ասէ ցն՟ո՝ վ՟ա այսորիկ՝ ա՟մ դպիր աշակերտեալ արքայութ՟ե երկնից՝ նման է առն տանուտեառն, որ հանէ ՚ի գանձէ իւրմէ զնոր և զհին։

Եւ ասէր՝ այսպէս է արքայութիւն ա̄յ · ո̄պ զի այր մի արկանիցէ զսերմանիս յերկիր։ Եւ ննջիցէ, եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ · եւ սերմանիքն բուսանիցին եւ աճիցեն · եւ նա ոչ գիտէ։ Զի ինքնին երկիր բերէ զպտուղն · նախ զխոտն՝ եւ ապա զհասկն ապա զցորեան ատոք ՚ի հասկին։ Եւ յորժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ մանգաղ՝ զի հասեալ են հունձք։

Եւ ասէր · ո̑ւմ նմանեցուսցուք զարքայութիւն ա̄յ · կամ որով առակաւ առակեսցուք զնա։ Ո̄պ հատ մանանխոյ՝ որ յորժամ սերմանիցի յերկրի՝ փոքրագոյն է քան զա̄մ սերմանիս՝ որք են յերկրի։ Եւ յորժամ սերմանիցի, բուսանի, եւ լինի մեծ քան զա̄մ բանջար · եւ արձակէ ոստս մեծամեծս մինչեւ բաւական լինել ընդ հովանեաւ նր̄ թռչնոց երկնից բնակել։ Եւ այնպիսի առակօք խօսէր [illegible]սա զբանն, ո̄պ կարող լինէր լսել։

Եւ առանց առակի ոչ ինչ խօսէր ընդ նոսա. բայց առանձինն աշակերտացն իւրոց մեկնէր զամ։

Մեծ Շաբաթին Օր Բ ուրբաթ Ղուկաս։

12 . 32։

ակ
գկ

Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն։ Վաճառեցէք զինչս ձեր, և տուք զողորմութիւն. և արարէք ձեզ քսակս առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս. ուր ո՛չ գող մերձենայ. և ո՛չ ցեց ապականէ։ Զի ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր եղիցին։ Եղիցին գօտիք ձեր պնդեալ. ընդ մէջս. և ճրագունք լուցեալք։ Եւ դուք նմանողք մարդկան՝ որք ակն ունիցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ՚ի հարսանեաց. զի յորժամ գայցէ և բաղխիցէ, վաղվաղակի բանայցեն նմա։ Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի ընդ մէջ

ածէ

ածցէ՝ և բազմեցուսցէ զնս․ և անցեալ պաշտեսցէ զնս։ Եւ եթէ յերկրորդ, կամ յերրորդ պահու եկեսցէ և գտցէ այնպէս, երանելիք են ծառայքն այնոքիկ։ Բայց զայն գիտասջիք․ եթէ գիտէր տանուտէրն յորում ժամու գող գայ՝ հսկէր, և չտայր թոյլ՝ ական հատանել ՚ի տուն իւրում։ Եւ դուք եղերուք պատրաստ՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք՝ գայ որդի մարդոյ։ Ասէ պետրոս․ տր՝ առ մեզ ասացեր զառակդ զայդ՝ եթէ առ ամենեսեան։ Եւ ասէ տր․ ով իցէ հաւատարիմ տնտես և իմաստուն․ զոր կացուսցէ տր իւր ՚ի վր գերդաստանի իւրոյ՝ տալ ՚ի ժամու զկերակուրս։ Երանի իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս։ Արդարև ասեմ ձեզ՝ զի ՚ի վր ամ ընչից իւրոց կացուսցէ զնա։ Ապա թէ ասիցէ ծառայն այն ՚ի սրտի իւրում, յամէ տր իմ ՚ի գալ․ և սկսանիցի հարկանել զծառայս և զաղախնայս․ ուտել և ըմ ըմպել՝ և արբենալ։ Եկեսցէ տր՟ ծառային այնորիկ, յաւուր յորում ակն ոչ ունիցի · և ՚ի ժամու, յորում ոչ գիտիցէ · ընդ մէջ կտրեսցէ զնա՝ և զմասն նր՟ ընդ անհաւատս դիցէ։

Այլ ծառայ՝ որ գիտիցէ զկամս տն՟ իւրոյ, և ոչ պատրաստեսցէ ըս՟ կամաց նորա՝ արբցէ գան բազում։ Իսկ որ ոչն գիտիցէ, և արժանի գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ · ամի՟, որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ՚ի նմանէ · և որում բազում աւանդ դեցաւ, առաւել ևս պահանջեսցեն ՚ի նմանէ։

ՄԵԾ Պ[illegible] ՅԷ ԲԷ աւ՟ ըստ Յովհաննու։

Ե · 19։

ած Պատասխանի ետ յս՟ և ասէ ցնս՟ · ամէն ամէն ասեմ ձեզ · ոչ կարէ որդի մարդոյ առնել յանձնէ, և ոչ ինչ, եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ · զի զոր նայն առնէ, զնոյն և որդին նմին նման գործէ։ Զի հայր սիրէ զորդի, և զամ՟ ինչ ցու-

գծ

ցանէ նմա՝ զոր ինքն առնէ. և մեծա մեծս ևս քան զայնս ցուցանէ նմա զգործս, զ՟ որս դուք՝ զարմանայք։ Զի ոպ՟ հայր յարուցանէ զմեռեալս. և կենդանի առնէ՝ նոյնպէս և որդի զորս կամի կենդանի առնէ։ Նա և ոչ եթէ հայր դատէ զոք՝ այլ զամենայն դատաստան ետ որդւոյ իւրոյ։ Զի ամենեքեան պատուեսցեն զորդին՝ որպէս պատուեն զհայրն. որ ոչ պատուէ զորդին, ոչ պատուէ զհայր զառաքիչն նր՟։ Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ լսէ՝ և հաւատայ այնմ, որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յաւիտենականս. և՛ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ՚ի մահուանէ ՚ի կեանս։

Ամէն ամէն ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ և այժմ իսկ է. յորժամ մեռեալք լուիցեն ձայնի որդւոյն ա՟յ. և որք լուիցեն, կեցցեն։ Զի որպ՟ հայր ունի կեանս յանձին իւրում. նոյնպէս ետ և որդւոյ ունել կեանս յանձին իւրում։ Նա իշխանութի

ետ

ետ նմա դատաստան առնել • և զի որդի մարդոյ է • Ընդ այն զի՛ զարմանայք՝ զի եկեսցէ ժամանակ յորում ամենեքին որք ՚ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա։ Եւ եկեսցեն արտաքս • որոց բարիս գործեալ իցէ՝ ՚ի յարու̅ի կենաց • և որոց չար արարեալ՝ ՚ի յարու̅ի դատաստանաց Ո՛չ կարեմ ես յանձնէ առնել և ոչ ինչ • այլ ո̅պ լսեմ, դատեմ • և դատաստան իմ արդար է • զի ո՛չ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս։

Սուրբ երգ տեառն Ներսեսի • ասացեալ վասն ՚ի Ք̅ս ննջեցելոց։

բ կ
գ կ
մ ա

Անեղ անժամանակ Հայր անըսկիզբն և անքնին • Որդւոյ պատճառ ծնընդեամբ անճառ՝ Հոգւոյն բղխմամբ անքննաբար • աղաչեմք ըզ քեզ դթած՝ երկայնամիտ և ողորմած • ողորմեա՛ քո ստեղծուածոյս՝ յուսով ՚ի քեզ ննջեցելոյս։

Բանդ որ 'ի ծոց հօր միածին՝ և կերպարան սկզբնատպին. որով երկինք գոյացան՝ աշխարհ բնիւ հաստատեցաւ. հայցեմք 'ի քէն տէր և փրկիչ
ամենողորմ և կեցուցիչ. ող″.

Գերագոյն շնորհաց բաշխող՝ երկնաւորաց և երկրայնոց. կենք և կենաց տրւող հոգի՝ հօր և որդւոյ արարչակից. խնդրեմք 'ի քէն աղբիւր բարեց արբուցանող ծարաւեաց՝. ող″.

Դաւանիմք ընդ սրոբէից՝ զկենդանարարդ համայնից. երեք սըրբեան մի տրուի՝ հայր և որդի և սբ հոգի. յոր հանգուցեալս մկրտեալ և հաւատով խոստովանեալ. ող″.

Երրակի թիւ կատարեալ յերիս անձինս բաժանեալ. ածութ միաւորեալ միով բնութ հաւասարեալ. յորմէ կապեմք և արձակիմք և վերստին անլոյծ կապիմք. ող″.

Աթակիցդ հօր զորդի փառաւորեմք անճառելի. որ իջեր յարգանդ կուսին՝ զադամային առեր մարմին. աղաչնօք ածածնին՝ անպկն քում ծընողին. ող″.

Ե°րւեցա̃ր մարմնով յերկրի՝ որ 'ի հողէ անմեկնելի․ ընդ հողեղէնս բնակեցար՝ 'ի հրեղինաց երկրպագեալդ․ պաղատանօք երկնաւորաց՝ փառաբանչաց քոց հրեշտակաց․ ող″։

Ը°ստ օրէնա̃ցըն մովսէսի՝ ընծայեցար 'ի տաճարի․ զի ըզ բնութիւն մարդկային՝ ընծայեսցես հօր 'ի յերկինս․ խընդրուածովք սբ̃ ծերունւոյն՝ քև 'ի կապից արձակելոյն․ ող″։

Թա°գաւո̃րըդ հրեղինաց՝ որ ընդ մարդկան հողեղինաց․ շըրջեցար անօրինաբար՝ կրեցեր ըզկիրըս մարդկաբար․ որ վասն մեր զայս ա̃մ՝ 'ի յանձն առեր խոնարհութե̃դ․ ող″։

բձ

դձ

մրկ

Ժ°ողովեա̃լքս 'ի հրաժարումըն ծառայի քո յաշխարհէ․ հայցեմք 'ի քէն արտասուելով և պաղատիմք զայս ասելով․ Ճանապա̃րհ ընդ քեզ ելից՝ հանգուցելոյս լէր ուղեկից․ 'ի լութևանս հօր քոյ լուսոյ՝ ըզ ննջեցեալս մեր հանգո́։

'Ի° փրկութե̃ մերոյ սկըզբան՝ մկըրտեցար 'ի յորդանան․ զոր շնորհեցեր

նոր աւազան՝ 'ի մաքրութիւն մեղաց մարդ-
կան՝ • հայցմամբ կըրկին կարապետին՝
մեծին 'ի ծնունդըս մըկըրտչին՝ • 'ի" •

Լուսաւոր ձայնիւ յերկնից՝ զքեզ
դաւանեաց հայր էակից • աղաւնա-
կերպ հոգւոյն իջեալ առ համագոյ իւր
հանգ[illegible]ւ՛ • ընդ մըկըրտեալս նորին հո-
գւով՝ յորդեգրութիւն հօր հաւանով՝ • 'ի":

Խաւար մեղաց հալածեցաւ՝ լոյս գի-
տութեան քո ծագեցաւ • խայթուած
օձին բըրդըզկեցաւ՝ հիւանդութիւն մեր
առողջացաւ՝ • կենդանարարըդ մեռելոց
և լուսատու խաւարելոց՝ • 'ի յօ":

Օգուածն անուն առ 'ի հօրէ՝ որ
ընտրեցեր 'ի յաշխարհէ՝ • լուսաւորիչ
տիեզերաց՝ ընդ դասս ընտրեալ աշակեր-
տացն՝ • աղաչանօք առաքելոցն՝ փող
յարութեան մեր եղելոցն՝ • 'ի յօ":

Կեանք 'ի կենաց լոյս 'ի լուսոյ՝ որ ըս-
տեղծեր զմեզ 'ի հողոյ՝ • նորոգեցեր
դարձեալ կըրկին՝ ծընընդեամբ սըր-
բոյ աւազանին՝ • զոր կեցուցեր շնոր-
հիւ քոյին՝ 'ի միհուանեկն այն առաջին • 'ի

Հոգւով ըղցեր զմարդն առաջին՝
զոր

զոր կորուսեալ խաբմամբ չարին․ ընդ նոյն հոգի բնութեան քոյին՝ հեղեր յոգիս մեր վերըստին․ նովին հոգւով տէր և բարի՝ առաջնորդեա հոգւոյ սորին․ 'ի

Զայնեցեր առ զզարդս՝ որով ետուր յոյս մեռելոց․ կենդանութեամբ չորեքօրեայն՝ կենդանացուցին որք յադամայն․ կենաց ձայնիւն վերջին փողոյ՝ կոչեա ընդ սա յայսմ հողոյ․ 'ի յօ"։

Պօղեալ սարսեցոյց պահակ մահու՝ 'ի կենարար ձայնիդ լերոյ․ արագապէս զոյգ ընդ բանին՝ ետ ընդմեռեալն ըստ հրամանին․ իշխանք օդոյս այս սարսեսցեն՝ զհոգի սորա մի արգելցեն․ 'ի յօթե"։

ակ
գկ
զու
Ճանապարհ մոլորելոց՝ և ձեռադոյթ խաւարելոց․ հրաւիրեցեր զորդիս լուսոյ՝ 'ի յերկնային հարսանիս քո․ ընդ զուարճալեաց անդ ժողովոց՝ արժանացո ընդ սա դասուց․ 'ի լապտերօք մոյծ յառագաստ՝ ընդ իմաստուն ե̅ կուսանացն։

Մերով բնութեամբ զոր ընդեցար՝ 'ի փայտ խաչին բևեռեցար․ լուծանե

Օ

րով զմեզ ՚ի մեղաց՝ ՚ի նախահօրըն կապանաց՝. լոյծ և ըզսա ՚ի յանցանաց՝ վ͞ն քո ս͞բ չարչարանաց՝. լե՛՛:

Ոեա կամաւոր մահու խաչի՝ եդար ՚ի նոր գերեզմանի՝. երեքօրեայ թաղմամբ յերկրի՝ նոր ըստեղծեր զմեզ կանդանի՝. զիջեալս ընդ քեզ ՚ի հող մահու վերակոչեա՛ ձայնիւ փողոյ. լե՛:

Խոստեալ կանանց իւղաբերից՝ և ողբոյին առաքելոց՝. իբր ըզմեռել անյուսալից՝ ըզկենդանիդ յաւիտենից՝. վասըն նոցին ս͞բ առաքելոց՝ մաքրեա ըզսա ՚ի յանցանաց՝. լե՛՛:

Շարժեալ հիմանցըն գըժոխոց՝ ՚ի տեսանելըն ըզքեզ ներքնոց՝. հաներ ըզհոգիսն որք ՚ի բանտին կային ըզիշխանըն մահածին՝. Ե͞ հանգուցեալ ՚ի հոգիս մեր՝ հանգո՛ ըզհոգի ննջեցելոյս:

Ուրախութե՜ զօրք երկնայինք՝ յերկնից յերկիր իջանէին՝. յորժամ յարեար ՚ի մեռելոց՝ լոյս ծագեցար արարածոց՝. ս͞բ յարութե՟ քո կենարար՝ յարո՛ ըզսա ՚ի կեանս անմահ՝. լե:

Զըհանդուրժեալ պահապանացն՝ ՚ի

յեր

յերկնուղէ երկնաւորացն՝ որք զաւետիս տային կանանց՝ թէ մահ լուծաւ մահկանացուաց՝ սա որ մահուն քրյ ընկերկից՝ լցի կենաց հաղորդակից․ ալ

Զուարթացեալ անմարմնականքն՝ առ կենսատու մեր գերեզմանն․ տան զաւետիս ազգի մարդկան՝ վասըն կենացն յաւէժականն․ դասաւորեալ պարուց նոցին՝ ընդ նմին ցնծալ յօրըն վերջին․ ալ՛՛

Ահաւորեալ մեծան խաչին՝ յարեւելից փայլեալ ծագի․ հաւատացեալքն կքեալ բերկրին՝ և ուրացօղքըն կոծեսցին․ զերկրպագութիւս մեր խաչին՝ պայծառացօ լուսով նորին․ ալ՛՛

աձ Ահ գործեալ երկնաւորացդ գան

գձ դառաջին քո նախընթացց․ զընտրելըս

յօհ քո ժողովելով՝ քեզ ընդ առաջ բերեն ամպով․ ընդ աղաւնեայն օդապարից՝ խառնեալ ըզսա սուրբ երամից․ դասաւորեալ ըզսա վերնոցն՝ երգել քեզ փառս ընդ զուարթնոցն։

Սարսափին տարերք երկրի՝ յորժամ փառօք գաս հայրենի․ արեգական լոյս խաւարի՝ լուսինն աստեղքն նը

ւազ

ւազի՝ ըզսա յաւուրն աներեկի՝ լուսաւորեամ լուսով քոյին՝ . դա"։

Վերնականն զօրացըն պետ՝ փողէ ընդ բարբառ երանաւէտ՝ . արի՛ք մեռելք որք յադամայ՝ քանզի ահա եկըն փեսայ՝ . ընդ հարսնացեալ մաքուր հոգւոց՝ կարգեա ըզսա 'ի թիւ ս̅ըց՝ . դ"։

Տիրականն յաւթոռ նստիս՝ յարարածոց երկրպագելիս՝ . արդարութե̄ զաշխարհ դատես՝ վարձս ըստ գործոց հատուցանես . յայնժամ շնորհեա ողորմուե̄՝ նըննջեցելոյս մեր զթողութի̄ . դ"։

Բամեալ մարդկան ազգ ժողովին՝ որք յադամայ ծընեալք լինին՝ . և հրեղէն նոցա դասք երկնայինն՝ համանգամայն վայրաբերին՝ . 'ի յայնմ ահեղ հրապարակին՝ յիշեա ըզսա յօրն ահագին . դ.

Ցուցանին գաղտնիք մարդկան՝ իւրաքանչիւրը որք գործեցան՝ . բարեաց գործողքըն պըսակին՝ չարեացն 'ի հուրն անշէջ մատնին՝ . յայնժամ յիշեա զսորա զբարին՝ զի գործք մեղացն ջընջեսցին՝ . դասա"։

Լուսոյն պըսակք զանազանեալք՝ և

պսա

պատմուճանք լուսափայլեալ · ո՟ք վե
կայիցն 'ի գլուխ եդեր և արդարոցն
զարդարեր · հաղորդս արա հայցմամբ
նոցին ընդ սա լուսոյ փա՟ռց նոցին · դա''·
Փառաց 'ի փառս բարձրանան աջա
կողմանքըն վերանան · յորժամ լսեն
զերանականն ձայն օրհնութ՟ե 'ի քէն
կոչմանն · նընջեցելոյս մեր լսեցո
զա՟ծայինն բարբառըն քո · դա''·
Քահանայք և ժողովուրդք հայցեմք
'ի քէն որ բարեգութ · ընդ ննջե-
ցեալս հաւատով ընկալ ընդ սա նո-
ցին յուսով · յե՟մ քաղաք վերին յո-
րում արդարքըն ժողովին · փառս
վեր երգել միշտ ընդ նոսին Երրոր
դութեդ երրեակ անձին ·

Ղ բարի է և մարդասէր անո-
խակալ է և բարեգութ · որ դադրի ադ
'ի սրօ բէէ ց Տ՟ր դատաւոր ար-
դարութ՟ե · ընդ սրբոց Ղաւ քէ-
լից Տ՟ր պսակեա զմեր ննջե-
ցեալսն · ողորմեա ծ որ ողո րմեա
հո-

Հոգւոյն մեր նորոգեցելոց։
Յորժամ գրեալ լքըն կա տարին
որ զայնմ աւուր մեզ պատմեցին·
մարգարէից բանքըն յորդին
առաքելոյըն վերձարին՝ ող։
Ի վերինն երուսաղէմ
ի բնակարանըս հրեշտակաց· ուր
ենովք և Եղիաս կան ծերա-
ցեալք աղաւնակերպ ի դրախ-
տին եդեմական պայծա-
ռացեալ արժանապէս · ող։
Թագաւոր փառաց Քսմ·
որ ժամանեալ գաս ի յերկնից ի
վերայ թևոց հողմոց քոյ հայ-
րենի կերպարանօք և առնես
հրափորձութ͞ե ընդքըննութիւն
որդւոց մարդկան · ող։
Ի դնիլ բեմին բազմին փեսային
և առագաստըն զարդարի · դըբրի
ելեալն փողըն գոչէ· սուրբք

ամ

ամ անդր հաւաքին · որդւոց դասքըն բերկրելն՝ ընդ մեզ աւետըրըն թաւխանձին · որ։

Յորժամ հրեշին փողոյն լինի եւ ղեւտակյան գերըն յայտնի · Ճառագայթ սըրբոյ խաչին յարեւելից փառօք ծագի · հրեշտակաց գունդք ծաւալին հրեշտակապետք պարունակին · ո։

Ի հեղ խորհուրդ քահանային ըմղկատարամ ծ կայ ի բեմին առաջի՝ տը սեղանոյն · հուր շիջանի խաւարը մերժի · ողորմեալ հոգին քըն ուրախանան զի թողութի մեղաց լինի · որ։

Սոլաէս տոռուամ ծախոն եւ ահարցն ըղզ թայլին · մարգարէ քն խաւայելին եւ քահանայք հին օրհնին · յառաջադոյն մեղ ծանուցին ընդգալուստ սուրբ մի-

ած

ածնիդ. 'ի փրկութի մեզ յայտնե
ցիր յանպատն կերպ կրեցին. օրհ:
Տէրամահաղորդ ըղ չարչարանօք
'ի յանձն առեր ըզ մահ խաչին.
Եւ փայտին բարձօղ եղեր մա̄
ադամայ նախաստեղծին. օրհ":
Զարհուրեցան զօրք երկնայի
նք յորժամ տեսին զՏէրդ 'ի
խաչին. արեգական լոյս քօղար
կեալ. Եւ լոյս լուսնին նուաղե
ցաւ. յահեղ փռ̄ց ա̄ծ որդւոյդ
խոնարհ եղև ընդ ամ եղերս. օրհ.
Ուրախացան ազգք մարդկան
յորժամ լուան զքո յարութիդ
նորափետուր զարդարեցան
'ի յարութե քո միածնիդ. օրհ":
Ողջանօք սրբո յ Խաչին
Եւ անբարբառն բարբառ խօսին. Եւ սրբ
բո յ Աստուածածնին. Եւ
Յովհաննու կարապետին. Եւ

սուր

սրբոյն Ստեփաննոսի և առաջին մարտիրոսին. և սրբոյ Լուսաւորչին Հայաստանեայց Հայրապետին. և սրբոց Առաքելոց. և համօրէն Մարտիրոսաց. ողորմեա ծ։

Ես ասացի ՚ի վերանալ յինէն աւուրց իմոց. յո՛ւր երթայցեմ ես այսօր. յառաջին յօթևանին զոր ոչ գիտէի. օգնեա և ինձ Տէր այսօր. յառաջին ճանապարհին և ՚ի միւսանգամ գալըստեանն քո օգնեա իմ ինձ.

Եկն էհաս յօր վախճանի իմոյ. լալումն ողբումն և աշխարումն. սիրտ իմ խռովեցաւ յիս և ոսկերք իմ ցամաքեցան. օգ։

՚Ի մահէ ձայն իմ զարթուցին զիս պատահանջօղք հոգւոյ իմոյ. տանեն զիս ՚ի ճանապարհ հեռաւագոյն զոր ոչ գիտէի. օգ.

Նայեցայ և ոչ ոք էր որ օգնէր ինձ . ապաւինեցայ յած փրկութեան իմոյ . ցընծասցէ հոգի իմ յարքայութեան քում . օգ ։

Գըրեցայ ես ի գիր կենդանութեան . և մեկնեցայ երթալ առ արարիչն երկնի և երկրի . օգ ։

Յանըստուեր և յանեղ լուսոյն հեռացայ . խաբմամբ խաւարային Ճաշակեցի մահաւիթ ըզպըտուղն . հողանայ պատկեր բարերար ստեղծողին . օգ ։

Յանջատմանն հոգւոյս ի մարմնոյս . ի քակտիլ գեղեցիկ շինուածոյս . զարհուրիմ ի սպառնալեաց թագաւորին . թէ պահանջէ յինէն զտաղանդ պատուիրանին . օգ ։

Կուսածին մարդացեալ ած իմ Յս . յայնժամ աւուր ահեղ ատենին զգնեալս արեան քո մի դատապարտեր . օգ ։

Սու

Սոսկալի է օր վախճանի. և ահեղ է օր քո դատաստանին. յորժամ աւուր ահեղ ատենին ըզգինս արեան քո մի անտես առներ՝ զի պատկեր եմ բարերար ստեղծողին. օդ:

Օ ահաւոր դատաստանն դատաւորիդ տեսի և զարհուրեցայ. զի անպատրաստ եգիտ զիս ՚ի հրամանաց քոց թգւր յաւիտենից. օդ:

Ածածին անարատ մայր տն և կոյս մր. բարեխօսեա առ որդիդ քո միածին. զի փրկեսցէ ըզմեզ ՚ի սպառնալեաց գեհենոյն. և պարգևեսցէ մեզ զերկնից զարքայութին. և հանգուսցէ զհոգիս մեր ննջեցելոցն. օդ.

մեղ Հոգւոցն հանգուցելոց Քս Ած արա հանգիստ ողորմութե. և մեզ մեղաւորացս՝ շնորհեա զթողութի յանցանաց: Ե-

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղա″:

Վս՟ հանգուցեալ հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մեր Քս՟ զի զնս՟ ը՟ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհի՟ւ ողորմութե՟ իւրոյ։
Ամենակալ տ՟ր ա՟ծ մեր կեցո՛ և ող″:

Տէր ողորմեա՝ երեք:

Քս՟ Որդի Այ՟ անոխակալ և բարեգութ՝ գթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի
գալստեան արքայութեան քոյ։
Արա՛ արժանի ողորմութեան՝ քաւութե՟ և թողութե՟ մեղաց։
Դասաւորեալ պայծառացո՛ ընդ սբ՟ս
քո յաջակողման դասուն։
Զի դու ես տ՟ր և արարիչ ամ՟ցուն. դատաւոր կենդանեաց և մեռելոց։
Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութի՟ և պատի՟ւ. այժմ և″:

Եւ ապա ասէ օրհնութիւն ըստ պատշաճի աւուրն. կամ ՚ի ճաշոցէն. և զինչ մաղթանքն, և քարոզն. և աղօթքն:

Մաղթանք Տէրունական Տօնից։

Փառք հրաշափառ ծննդեան քո տէր. զօրհնեալ և զփառաւորեալ զհրաշալի և զյաղթօղ Ծնունդ քո մեք օրհնեմք և փառաւորեմք։ Մարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատի Մօր քո և կուսի. և վասն Խաչի քո պատուականի՝ ընկա՛լ զաղաչանս մեր և կեցո՛ զմեզ։

Սոյնպէս ասա՛ և ամենից տօնից տէրունականաց ըստ պատշաճի աւուրն։ Թէ յայտնութեան, թէ գալստեան, թէ պայծառակերպութեան, թէ տնօրէնութեան, թէ մատնութեան, թէ խաչելութեան, թէ թաղման. թէ յարութեան, թէ համբարձման, թէ գալստեան հոգւոյն սրբոյ. և թէ ՚ի տօնս սրբոյ խաչին և եկեղեցւոյ։ Բայց ՚ի գալստեան հոգւոյն սրբոյ՝ զմարդասէր տէրն այսպէս ասա՛։ Մարդասէր տէր՝ վասն սրբուհւոյ անարատի Մօրն և կուսի. և վասն խաչին պատուականի՝ ընկա՛լ զաղա″։ Ո՛չ է սխալին որք ասեն առ հոգին սուրբ. թէ մօր քոյ կամ խաչի քոյ։ և ՚ի տօնս եկեղեցւոյ ասա՛՝ Փառք տէրութեան քո տէր։ և այլն որ ՚ի վերոյ։

Մաղթանք Ներ տօնից Սրբոց։

Բարեխօսութե՟ սրբուհւոյ Ա՟ծածնին. և Յովհաննու Մկրտչին. և սրբոյն Ստեփաննոսի նախավկային. և սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին։ Յիշատակաւ և աղօթիւք սրբոց այս անուն որոց այսօր է յիշատակ։ Եւ վասն Խաչի քո պատուականի՝ տ՟ր ընկալ զաղաչանս մեր և կեցո զմեզ։

Մաղթանք Պահոց։

Սա է իմ ա՟ծ, և փառաւոր առնեմ զա՟ծ հօր իմոյ՝ և բարձր արարից զնա։ Մարդասէր տ՟ր։ Երկշ

Տուք փառս տ՟ն, տուք օրհնութի՟ մարդասիրին Թագաւորին յաւիտենից, որ փրկէ զծառայս իւր և կեցուցանէ։ Մարդա՟։ Երքշ

Դու ես տ՟ր մեր՝ դու ես Ք՟ս փրկիչ մեր. զքեզ օրհնեն անձինք մեր։ Մարդասէր տ՟ր։ Հնգ

Բարձրացաւ եղջիւր իմ յա՟ծ փրկիչ իմ հաստատեցաւ սիրտ իմ ի տ՟ր՝ սիրամբ և հաւատով։ Մար՟։ Ուր

Խաղաղութեց տուր օղ Ք՟ս, զխաղա [illegible]

ղութի և զերկնային ողորմութի քո
պարգևեա յարարածս քո։ Տէ՛ր։

Փրա Յոյս կենդանութե, յոյս և ապաւէն
փրկութե որ յա քո, փրկեա զնս և փա
րատեցո զցաւս անձին խղճոյ։ Տէ՛ր։

Խոս Ելեսցեն աղօթք մեր 'ի տաճար սբ
քո. խոնարհեսցի ունկըն քո 'ի
խնդրուածս մեր. Տէ՛ր։

Ընէղ Լուր մեզ տր լուր մեզ, ածային ո
ղորմութբ և գթութբ քով խնայեա յա
րարածս քո։ Տէ՛ր։

Քարոզ Սրբանէաղ, և Մեբրն քահանայն.

Վասն 'ի վերուստ խաղաղութե
և փրկութե անձանց մերոց, զտր։

Վասն լսելի լինելոյ տն այ ձայնի
աղաչանաց մերոց, զտր աղա։

Վասն քաւիչ և ներող լինելոյ այ
'ի վր մեղաց մերոց, զտր։

Վս թողլոյ մեզ զամ յանցանս մեր՝
զկամայ և զակամայ, զտր։

Վս զի մի ընդ խոտանսն դատեսցիմք
յաւուրն պատասխանատուութե, զ։

Վս հոգւոցն հանգուցելոց՝ որք ճըշ
մարիտ և ուղիղ հաւատով 'ի քս ննջե
ցին, զտր։

Վս

Ու եւս միաբան, վս՟ ճշմարիտ և ուղ՟
հաւատոյ մերոյ, զտ՟ր ա'':

Զանձինս մեր՝ և զմիմեանս, տ՟ն ա՟յ
ամենակալին յանձն արասցուք.

Ողորմեա՛ց մեզ տ՟ր ա՟ծ մեր ըստ մեծի
ողորմութ՟ե քում. ասասցուք ա՟մքն
միաբանութ՟բ: Տ՟ր ողորմեա՛. տ՟ր
ողորմեա՛. տ՟ր ողորմեա՛:

Աղօթք:

Տէր տուընջեան՝ և դոյացուցիչ գիշերոյ. որ արարեր զտի՟ւ ՚ի զբօսանս բարեգործութ՟ե՝ ՚ի փրկութ՟ի անձանց մերոց, և զգիշեր ՚ի հանգիստ քնոյ՝ տկարացեալ բնութ՟ես մերոյ: Իսկ այժմ զարթուցեալ բացեր զբերանս մեր յօրհնաբանութ՟ի՝ ահաւոր և փառաւորեալ անուա՟նդ քում սրբոյ: Ընկալ և այժմ զաղաչանս մեր, և յաջողեա՛ մեզ ուղիղ հաւատով և առաքինասէր վարուք ՚ի նոյն պահտօն քո կանխել միշտ. և նովին կանոնի՟ւ՝ անդադար փառաւորել ըզ
հայր և զորդի և զս՟բ հոգին.
այժմ և միշտ'':

Խաղաղութեան Ննջեցուն:

Զ քեզ, որ յա՟մի դթած և մարդասէր տ՟րդ ես՝ աղաչեմք հանապազ, զի զօրացուցես զմեզ օրըստօրէ կալ 'ի կարգի կրօնաւորութե՟ մերում: Թեթևացո՛ տ՟ր՝ զքաղցր լուծ քո՝ զոր եդեր 'ի վերայ մեր, զի կարասցուք կալ 'ի պատուիրանի քում, և զհաճոյսն առնել առաջի քո յա՟մ ժամ՝ 'ի տուէ և 'ի գիշերի: Հրեշտակային երգակցութե՟ զքեզ օրհնել՝ զքեզ գովել, և քեզ գոհութի՟ և փառս մատուցանել ամենազօր տ՟րութե՟դ,

Այժմ և միշտ և՛՛:

Սաղմոսիւք և օրհնութե՟՝ և երգովք հոգևորովք անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զս՟բ հոգին,

այժմ և միշտ և՛՛:

Օրհնեալ տ՟ր մեր յ՟ս ք՟ս. ամէն:

Հայր մեր որ յերկինս ես՛՛:

Քարոզ Օրհնեալ պատմին, և Տէր ողորմեն

կանոնայն:

Ս՟ 'ի գիշերի և 'ի տուընջեան, և յա՟մ ժամու խօսիլ մեզ զբան տ՟ն, զո՟ր՛՛:

Վ՟ն չանկանելոյ մեզ 'ի փորձութի՟ն, որում ոչ կարեմք հանդուրժել, ղ՛՛:
Վ՟ն անբիծ և անդատապարտ կալոյ մեզ առաջի ահեղ ատենին քո . ղ՛՛:
Վ՟ն առաջնորդելոյ մեզ 'ի նաւահանգիստն կենաց անվախճանից, ղ՛՛:
Վ՟ն արժանի լինելոյ մեզ վերին կոչմանն՝ և երկնից արքայութե՟ն, ղ՛՛:
Վ՟ն հոգւոցն՛՛: Եւ ես միաբան՛՛: Զանձինս մեր՛՛: Ողորմեա մեզ՛՛:

Աղօթ՟:

'Ի գիշերի և 'ի տուընջեան և յամ ժամու զքեզ աղաչեմք, և 'ի քէն խնդրեմք մարդասէր տ՟ր: Տուր մեզ ա՟ծ փրկիչ մեր . խոնարհեցո՛ ունկն քո 'ի խնդրուածս մեր . զի մի ունայն լիցին վաստակք ծառայից քոց . այլ՝ համարեա՛ զաշխատութի՟ս մեր 'ի գործարդարութե՟, և 'ի պտուղ ա՟ծպաշտութե՟: Ընկա՛լ տ՟ր՝ զաղօթս և զերկրպագութի՟ս մեր, և հաստա՛ մեզ զողորմութի՟ քո առատապէս . ծածկեա՛ զմեզ ը՟ հովանեաւ ամենազօր աջոյ քոյ . զօրացո՛ զմեզ տ՟ր՝ զօրութե՟ ս՟բ հոգւոյդ. պահեա՛ զմեզ ո՛չ ըլլ ականի։ Եւ արա՛ առ մեզ նշան բարի, 'ի գովեստ և 'ի փառաբանութիւն անուանդ քում սրբոյ։ Զի 'ի քո փառս կատարի տէր արարածոց մշտնջենաւոր փառաբանութիւն 'ի բարձունս, հօր և որդւոյ և հոգւոյդ սրբոյ. այժմ և՛։

Խաղաղութեան Մաղթեցան։

Հովիւ քաջ՝ հովիւ բարի՝ և յաւիտենական, նայեա՛ց և ո՛ղջ արա բանաւոր հօտի քո, զոր ժողովեցեր առ քեզ գթութեամբ քով։ Զի 'ի քո առաջի կամք մեր, և առ 'ի քէն ողորմութեանցդ և գթութեանցդ ակն ունիմք։ Զամենեսեան օրհնեա՛. զամենեան խնամանացո՛. զամենեան լուսաւորեա՛. և ամենեցուն պարգևեա՛ զերկնից արքայութիւնդ։ Վասն զի դու ես տէր կենաց, և Աստուած ողորմութեանց. և քեզ վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ. Այժմ և միշտ, և յաւիտ՛։

'Ի գիշերի և 'ի տուընջեան՝ և յամենայն ժամու անդադար փառաւորեսցուք զհայր և զորդի և զսուրբ հոգիդ։ այժմ և՛։

Քարոզ Մենախանչէր, և Խոստովան չա"։

Վս̄ ուղղելոյ զընթացս մեր 'ի ճանապարհս խաղաղութե̄, զտ̄ր աղ"։

Վս̄ ցրելոյ 'ի մէնջ զամ̄ խորհուրդս չարին, զտ̄ր աղաչեսցուք։

Վասն պարգևելոյ մեզ առողջ խորհուրդս՝ և առաքինի վարս, զտ̄ր"։

Վս̄ պահելոյ զմեզ ընդ հովանեաւ ամենազօր աջոյն իւրոյ, զտ̄ր"։

Վս̄ խորտակելոյ զհակառակորդն վաղվաղակի ընդ ոտիւք մերովք, զ"։

Վս̄ հոգւոցն"։ Եւ ևս միաբան"։ Զանձինս մեր"։ Ողորմեաց մեզ"։

Աղօթք։

Տէր երկնի և երկրի՝ արարիչ ամ̄ արարածոց՝ երևելեաց և աներևութից։ Առ քեզ կարդամք յամ̄ ժամ. զի ընդ ամ̄ տեղիս է տէրութի̄ քո, և արքայութի̄ քո ամենեցուն տիրէ։ Շնորհեա մեզ երկիւղիւ 'ի պաշտօն քո կանխել համապազ։ Սիրել զքեզ 'ի բոլոր սրտէ՝ և 'ի բովանդակ մտաց. և յամ̄ զօրութե̄ մերմէ պահել զպատուիրանս քո։ Համբառնալ առ քեզ զձեռս մեր 'ի սրբութի առանց բարկութե և երկմտութե. և գտանել 'ի քէն զշնորհս և զողորմութի, և զառաքինաւէտ գործոցն յաջողութի ։ Վ՟ս զի դու ես տր կենաց՝ և ած ողորմուէց. և քեզ վայելէ փառք իշխանութի և պատիւ. այժմ և՛՛։

Խաղաղութիւն Օձնեցւոյն։

Քում ամենազօր և յաղթող տրութեանդ՝ կրկնի ամ ծունր յերկրպագութի. և փառաւորի յամենեցունց թգրութի քո։ Նայեա՛ յերկրպագութիս մեր, և ուսո՛ մեզ առնել զարդարութի ճշմարտութե։ Վ՟ս զի դու ես ած խաղաղութե, որ բարձեր զթշնամութի 'ի միջոյ՝ և արարեր զխաղաղութի յերկինս և յերկրի. հեռաւորաց և մերձաւորաց աւետրնեցեր զնոր պարգևս քոյին բարեացդ։ Որում և զմեզ մեծի շնորհացդ արժանաւորս արասցես՝ դասելով ընդ ճշմարիտ երկրպագուս քո. ած մեր՝ և տր, և փրկիչ յս քս։ Որ ես օրհնեալ ընդ հօր և ընդ սբյ հոգւոյդ. այժմ և՛՛։

Երգս օրհնութե՟ն և ՚ի ձայն սաղմոսաց, անդադար փառաւորեմք զՀայր և զՈրդի և զՍ՟բ Հոգին. այժմ և միշտ և″։

Քարոզ Ողորմեա՛, և ՚Ի Ներսէ՟ Շնորհալւոյն։

Վս՟ գտանելոյ մեզ զշնորհս և զողորմութի ՚ի բարեր՟ր տ՟նէ մերմէ, զ″։
Վս՟ փրկելոյ զմեզ ՚ի զրպարտութե՟ մահական՝ և յորոգայթից սատ՟նյի, զ″։
Վասն ա՟մ անձանց քրիստոնէից՝ և տանց հաւատացելոց, զ՟ր″։
Վս՟ որք ՚ի լերինս՝ յայրս և՚ի փապարս բնակեալ են ս՟բ հարքն մեր, զ″։
Վս՟ որք սղմսիւք և օրհնութ՟բ կտ՟րեն զա՟մ ժամանակս կենաց իւրե՟նց, զ″։
Վս՟ հոգւոցն″։ Եւ ևս միաբանն″։
Զանձինս մեր″։ Ողորմեա՛ց մեզ″։

Աղօթք։

Խոստովանիմք զքեզ տ՟ր ա՟ծ մեր, որ զարթուցեր զմեզ ՚ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո։ Զարթո՛ զմիտս մեր արդարութե՟ առքեզ տէր ա՟ծ մեր. զի տեսցեն

աչք

աչք մեր զփրկութի՟ քո։ Եկեսցէ և բնակեսցի առ մեզ ա՟ծութի՟ քո. և ողորմութի՟ քո՝ հովանի և պահապան լիցի ՚ի վ՟ր պաշտօնէից քոց. և զմեզ զծառայս քո՝ արժանի արա ՚ի տուէ և ՚ի գիշերի և յա՟մ ժամու միշտ խորհել ՚ի սէր պատուիրանաց քոց։

Եւ գոհանալով փառաւորել զհայր և զորդի և զս՟բ հոգիդ, այժմ և՛։

Խաղաղութեան ամենեցուն։

Կենդանարար զօրութի՟ և աղբիւր անմահութե՟՝ դու ես Ք՟ս Ա՟ծ փրկիչ մեր։ Որ շնորհեցեր զմեզ ՚ի մէջ գիշերի յառնել՝ և խոստովան լինել առ քեզ՝ վ՟ս իրաւանց և արդարութե՟ քո։ Եւ այժմ աղաչեմք զքեզ Տ՟ր Ա՟ծ մեր, արա զմեզ արթունս և պատրաստս ՚ի ժամ առաւօտու ընդ ս՟բս քո։ Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զքեզ ընդ հօր և ընդ հոգւոյդ ս՟բյ, այժմ և՛։

Գոհութե՟ և ճշմարիտ խոստովանութե՟՝ անդադար փառաւորեմք զհայր և զորդի և զս՟բ հոգիդ, այժմ և՛։

Թագաւորք Աշխարհաբարեան։

Թագաւոր յաւիտենական։ Է Հե

Լուր մեզ աստուած փրկիչ մեր. և կեցո ըզ մեզ
որ յամենայնի կարօղդ ես։

Լուր մեզ ած փրկիչ մեր. յոյս ամ ող
ծագաց երկրի. և որ ի ծով հեռի։

Պատրաստէ ըզ լերինս զօրութե
իւրով. և ըզգեցեալ է զզօրութի. և
կեցո ըզ մեզ որ յամի կարօղդ ես։

Լուր աղաչանաց մերոց տէր մար- փ
դասէր և գթած ի մեզ։

Մի զիս անտես առներ. ա մէ Թ

օդ

օգնեա՛ ինձ մարդասէր։

աղ Մի՛ ընկենուր զիս տէր յերեսաց քոց
և զՀոգին քո սուրբ մի՛ հաներ յինէն։
Տո՛ւր ինձ զցնծութիւն փրկութեան.
և հոգւով պետութեան քո հաստատեա՛
զիս։ այլ օգնեա՛։

փ Մի՛ անտես առներ զիս՝ տէ՛ր աստուա՛
ծ փրկիչ իմ. այ՛լ շնորհեա՛ ինձ
թողութիւն բազմագութ մարդա-
սէր և ըկեցո՛։

թ Երկինք և երկիր գոհանան ընդ
քեզ տէր՝. արարածք ամենայն քեզ եր-
կրպագանեն՝. և հրեշտակք ՚ի՝ բար
ձունս աղաղակեն և ասեն՝. ողորմեա
դու ստեղծեր՝ մի՛ կորուսաներ։

աղ Երկինք երկնից՝ ջուրք որ ՚ի վերոյ
քան զերկինս՝ օրհնեցէք զանուն տեառն։
Զի նա ասաց և եղեն. հրամայեաց
և հաստատեցան։ և հրեշտակք ՚ի՛։

փ Երկինք և երկիր հանապազ ընդ
քեզ գովեն՝. թագաւո՛ր փառաց

սե

սերոբէք և քերոբէք 'ի խոնարհ ունելով ըզդէմս իւրեանց. և միաձայն բարբառով աղաղակեն և ասեն. սուրբ սուրբ: սուրբ՝ տէր զօրութեանց:

Երկայնամիտ ես տէր առ ամենեան. և գթած տէր 'ի վերայ մեր. ողորմեա և ը աւազակին փրկիչ և ըկեցո: ԳՀ

Երկայնամիտ բազումողորմ և ճըշմարիտ. նայեաց առ իս և ողորմեաց ինձ: Տուր զօրութիւն ծառայի քո. կեցո զորդի աղախնոյ քո. և արա առ իս նշան բարութեան: և գթած տէր 'ի վերայ մեր. ողորմեա և ը աւազա″: ող

Տէր որ գթացար յաւազակին խաչակից լինել քեզ. և մաքրեցեր զաղտեղութիւն յանցանաց նորա յաղբերէ կողին քո. գթա և յիս իմեղաւորս որ ծարաւեալս եմ առ քեզ. և փոփագիմ 'ի գաւիթըս քո որպէս ըզմի 'ի յեղջերուաց 'ի յաղբերս բըղխման ջուրց: փ

Մար

Թ Մարտեաւ ընդ իս Թշնամին. հա-
նապազ զիս կամի կորուսանել. այլ
դու Տէր իմ այց արա մոլորեալ ոչխա-
րիս և ը՛ կեցո.

աղ Մարտեան ընդ իս ՚ի տարապարտուց.
և փոխանակ սիրոյ իմոյ մատնէին
զիս. այլ ես յաղօթս կայի.
Հատուցին ինձ չար փոխանակ բար-
ւոյ. ատելութիւն փոխանակ սիրոյ
իմոյ. այլ դու Տէր իմ այց արա մո-
լորեալ ոչխարիս և ը՛ կեցո.

փ Որ հովիւդ ես հօտից բանաւոր
կենդանեաց. տուր ինձ յոյս կենաց
ապաշխարութեան. և դարձո զմոլորեալս
՚ի հօտ քո Քս և ը՛ կեցո.

Թ Մեղայ և աղաչեմ ըզ քեզ. Թողու-
թիւն շնորհեա մեղաց իմոց. քա-
ւիչ իմ լեր քո գթութեդ. որ միայնդ
ես փրկիչ և ը՛ կեցո.

աղ Մեղայ Տէր մեղայ. և զանօրէնութիւնս
իմ ես ինձէն գիտեմ.

Մեղա

Աղաչեմ և խնդրեմ ՚ի քէն թող ինձ տէր. թող ինձ և մի կորուսաներ զիս ըստ անօրէնութեան իմոյ. քաւիչ իմ լեր քո գթութեամբդ. որ միայն։

Մեղայ քեզ տէր. մեղայ քեզ տէր մեղայ. և քան զաւազ ծովու բազում են յանցանք իմ. պատրանք աշխարհիս խաբեցին զիս. և եղէ անպտուղ ՚ի կենաց յուսոյդ. այլ դու անոխակալ և անյիշաչար փրկիչ. խնայեա ՚ի մեղուցեալ ծառայս և ը կենդանացո։ փ

Տէր իմ բազում են անօրէնութիւնք անձին իմոյ. ոչ յիշեցից զահեղ ընդդատաստանս քո. որդ անկեալ ընդ քեզ աղաչեմ. շնորհեա ինձ ապաշխարութիւն տէր և ողորմեա։ դշ

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան ըզգլուխ իմ. և որպէս բեռըն ծանր ծանրացան ՚ի վերայ իմ։ ող

Նե

Նեխեցա՜ն և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեա՛ն ի՜մոյ։
ոչ յիշեցի զահեղ ըզդատաստանըս քո. արդ անկե՟լ ըզքեզ աղաչեմ
շնորհեա՛ ինձ ապաշ՟։

փ Պաղատանօք մատուցանեմք քեզ հա՜յր երկնաւոր. մի՛ անտես առներ՝ զաղաչանս մեր. այլ անցո՛ զցասումըն քո՛ ՚ի մէնջ. և յիշեա՛ զի պատկեր
եմք բարերարութեա՛ ՟նդ։

թ Տէր իմ գըթութիւնք քո բազում են յոյժ. առ իս արա՛ զբարերարութիւնս քո՝. և ոպ՟ ը՞ մաքսաւորին
և ինձ ողորմեա՛։

աղ Գըթութիւնք քո բազում են տ՟ր.
և ըստ իրաւա՛նց քո՜ց կե՜ցո՛ զիս։
Բազում են որ հալածեն և նեղեն զիս. ՚ի վկայութե՟ց քոց ես ո՛չ խոտորեցայ՝. առ իս արա՛ զբարերարութիւնս
քո՝. ոպ՟ և ը մաքսա՟։

Աննոխակալ և անյիշաչար տէր․ որ գըթալով ՚ի մեղաւորս շնորհեցեր ապաշխարութիւն․ արդ գըթա և յիս տէր ՚ի մեղուցեալ և յանօրէնեալ քո ծառայս․ և փոխարկեա ընդ գործողըն չարեաց ՚ի զըղջումն ապաշխարութեան և ը՝ կեցո․ փ

՚Ի տաճարին քում սրբութեան․ փառաւորելով ընդ քեզ․ դու ունիս իշխանութիւն ողորմեա՛ մեզ․ Թ

Այլ ես ըստ բազում ողորմութեան քում մտից ՚ի տուն քո․ և երկիրպագից ՚ի տաճար սուրբ քո երկիւղիւ քո։ Տէր առաջնորդեա ինձ յարդարութեան քում վասն թըշնամեաց իմոց․ և ուղիղ արա՝ առաջի իմ ըզճանապարհս քո․ դու ունիս իշխանութիւն ողոր․ ող

՚Ի տաճարի քում սրբութեան հանապազ ընդ քեզ գովեմք թագաւոր փառաց․ որ ունիս իշխանութիւն կենաց և փրկութեան ողորմեա մեզ։ փ

Աղաչ

եշ Ապաշխարութե՟ արտասուս ա-ւազան լինել և լուացանոյ ըզ բազմութի՟ մեղաց · սովաւ շնոր-հեա յառաջ քան ըզ վախճան ըզ քաւութի՟ և ըզ մեծ քո զողոր-մութիւն ։

աղ Ծարաւի է անձն իմ առ քեզ Ա՟ծ հզօր և կենդանի · երբ եկից երևե-ցայց երեսացդ աստուծոյ ։

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ՚ի տուէ և ՚ի գիշերի · և այն՝ զի ա-սէին ցիս զօրհանապազ թէ ո՞ւր է աստուած քո ։ սովաւ շնորհեա յա-ռաջ քան ըզ վախճան զքաւ՟ ։

փ Յորժամ գաս փառօք հօր յահագին աւուրն ՚ի դատել զերկիր · և դո-ղան սարսափմամբ երկրածինքս ա՟մ ՚ի յահէ քումմէ · ՚ի նստիլ քո յա-տենի դատաւոր ահեղ · և յանկար-կել քո յարմարածս՝ յիշեա և զիս ընդ բազմամեղս · որ ընկղմեալս եմ յանցանօք բանսարկուին խաբմամբ եւ հայցեմ զաւանդականն տր̄ · եւ զքս յիշեա՛ · որ միայնդ ես փրկիչ:

Թ Ո՛վ յս որ ՚ի նաւի աշխարհի ալէկոծեն մեղք իմ · նաւահանգիստ ապաշխարութեան շնորհեա ինձ բազմամեղիս եւ ը՛ կեցո՛:

ող Կեցո՛ զիս ած՝ զի՛ հասին ջուրք յանձն իմ · ընկղայ ես ՚ի խորս անդընդոց ուր ո՛չ գոյ ինձ հանգիստ: նաւահանգիստ ապաշխարութեան շնորհեա ինձ բազումմեղիս:

փ Նաւապետ բարեգութ առ քեզ ապաւինիմ · տուր ինձ ձեռն ոպ երբեմն պետրոսին ՚ի վե՛ր ալեացն · որ ծփիմս ալէկոծեալ յանցանօք մեղաց եւ ը՛ կեցո՛:

Թ Դու ես քս̄ աղբիւր կենաց · բղխումն ողորմութեան · շնորհեա

փըր

փրկիչ անձանց մերոց ընդ թողու_
թիւն մեղաց մերոց:

սղ Ի՝ քէն է որ աղբիւր կենաց՝. և լու_
սով երեսաց քոց տեսանեմք ըզլոյս:
Ձգեա՛ զողորմութիւնս քո որք ճա_
նաչեն ըզքեզ. զարդարութիւնս քո
որք ուղիղ են սրտիւք: Շնորհեա՛ փր
կիչ անձանց մերոց ընդթող":

փ Ո՛ր աղբիւրդ ես ծարաւեաց և հան
դիստ աշխատելոց. ճանապարհ մոլո
րելոց՝ և հովիւ հոգևոր բանա_
ւոր հօտի. փափագողացս առ քեզ
քո լեր նաւահանգիստ. և արբո՛ մեզ
ծարաւեացս ըզբաժակ քո քաղցրութե
յանսպառ աղբերէդ:

ուր Ի՛ տաճարի սրբութեան քում
լուր որ ձայնի իմում. և աղա_
չանք իմ ժամանեսցեն ի յական_
ջս քո տէր:

սղ Լուաւ ինձ ի տաճարէ սրբ իւր_

մէ

մէջ ձայնի աղօթից իմոց. և աղաղակ
իմ առաջի նր, մտցէ յականջս նր։
և աղաչանք իմ ժամու''։

Որ լուսատու ես անեղերաց քրիս_ աղթ
տոս աստուած. լուսաւորեա զիմ
զխաւարայինն խորհուրդս և զի կե՛։

Օրհնեալ ես տր՝ և փառաւորեալ փ
է քո անուն մարդասիրութիւնդ.
զաղաչանս մեր քեզ մատուցանեմք
որ թագաւորդ ես յաւիտենից.
զննջեցելոյն մեր արժանի արա
տր ընդունելի ի կեանսդ յաւի_
տենից։

Արտասուս ինձ շնորհեա ի յա Թ
պաշխարութի տր. զի լուացից
զմեղս անձին իմոյ որպէս պոռ_
նիկն աղաչեմ և ընկեցից։

Վաստակեցայ ես ի հեծութե իմում. աղ
լուացից զամ գիշեր զմահիճս իմ.
և արտասուօք իմովք զանկողինս իմ
թացից. զի լուացից զմե''։

վ Որ աղբիւրդ ես անմահական քրիստոս աստուած. զվիրաւորեալ անձն իմ ՚ի մեղաց. բըժըշկեա տէր բըղխմամբ արտասուաց և ըկեցո.

Թ Ողորմեա ծառայիս խընդըրեմ տէր. և մի դատապարտեր ըզիս ՚ի յաւուրն այցելութեան քո մարդասէր.

աղ Կեցցէ անձն իմ օրհնեսցէ ըզքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ. Մոլորեցայ ես որպէս ոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո. զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ. և մի դատապարտեր ըզիս ՚ի յաւուրն այցելութեան քո մարդասէր.

վ Որ մոլորեցայ ՚ի հօտէ քումմէ հովիւ բարի. խընդըրեա զիս ըզմոլորեալս. և արժանաւորեա խառնել ՚ի հօտս քո քրիստոս և ըկեցո.

Թադէոսի Առաքելոց։

Թագաւոր յաւիտենական։ ակ
Ողորմութին քո տէր
արա 'ի մեզ. և բարեխօ-
սութբ սըրբոց մարտիրոսաց՝ մի' կորու-
սաներ ընդ մեզ Երրորդութիւն
սուրբ ողորմեա մեզ։

Փրկութի՛ արդարոց 'ի տնէ է. վերա- ող
կացու է նց 'ի ժամանակս նեղութե։
Օգնեսցէ նց տր և փրկեսցէ զնս.
ապրեցուսցէ 'ի մեղաւորաց. և կե-
ցուսցէ ըզնս, զի յուսացան 'ի նա։
և բարեխօսութբ սոցա մի' կորուսա-
ներ ըդ ըմեզ երրորդու"։

Որք ըզտանջանս և ըզ մահ վասըն փ
քո յանձն առին. և հեղին զարիւնս
իւրեանց վասն անուանդ քում
սբյ. բարեխօսութբ սոցա մի' կորու-
սաներ ըդ մեզ տր"։

Թա

աձ Բարէ խօսութբ̄ սըրբոց մարգարէից
սացն. աղաչեմք ըզ
քեզ. թողութիւն շնորհեա յան
ցանաց մերոց. բարերար ը
քրիստոս:

ադ Մերձ է տր̄ առ այնոսիկ որք մաշեալ
են սրտիւք. և ըզ խոնարհս հոգ-
ւով կեցուցանէ:

Բազում նեղութիւնք են արդարոյ
յամենայնէ փրկէ զնս̄ տր̄. և պահէ
զա̄մ ոսկերս նոցա. և մի ի նոցանէ
ոչ կորիցէ: թողութիւն շնոր
հեա յանցանաց մե":

փ Որ յաղթող զօրութբ̄ ի հանդերձ
ձըգնաւորական. անապատս ա սպա-
հեցեր զխոստովանող վըկայս քո
Քս̄ Լծ. տար մեզ զօգնութի
ւն ի նեղութե մերում. բարե
խօսութբ̄ սըրբոց մարգարէիցս ց
և ըզ կեցո:

Բա

Բարեխօսութբ սրբոց մարտի֊ բձ
րոսաց։ Պարգևեա մեզ
տէր. առնուլ մասն և բաժին ընդ
հրաւիրեալսն ի կոչումն ար֊
քայութեան երկնից։

Սքանչելի է ած ի մէջ սրբոց իւրոց ող
ած իսրայէլի։ Նա տացէ զօրութի
հաստատութե ժողովրդեան իւրոյ.
օրհնեալ է ած։ առնուլ մասն և բա''։

Մարտիրոսք երանեալք և փառաւո֊ փ
րեալք. որք բազում տանջանացն
համբերեցիք. դուք զլոյսն կե֊
նաց զգեցեալ ունիք. և առ քս
վասն մեր բարեխօսեցէք։

Դու ես քս աղբիւր կենաց բղ֊ բկ
խումն ողորմութե. շնորհեցեր սր֊
բոց մարտիրոսացն յաղթող ընդդիմա֊
հարկութի. հալածել զխաւարն
և լուսաւորել զանձինս մեր։

Ած փառաւորեալ է ի խորհուրդս ող
սբց իւրոց. մեծ և ահաւոր ի վերայ

ամեն

ոյնոցին որք շուրջ են ըզնովաւ։

Տ՟ր ա՟ծ զօրութե՟ց ո՛վ նըմանի քեզ. հըզօր ես դու տ՟ր և ճշմարտութի՟ն քո շուրջ է ըզ քև։ շնորհեցեր սրբոյն այս անուն յաղթօղ զնահատակութի՟ն հալածել ըզ խաւարն և լու՟ս":

փ Ո՛ր շնորհօք սբ հոգւոյն յաղթեցիք թշնամւոյն երանե՟լ սբ վըկայք քո. վ՟ն ձե՛ր տօնողացս՝ հայցեցէ՛ք յ՟յ զթողութիւն ըմե՟ղաց։

փ Ո՛ր պըսակ էք պարծանաց մե՟ր առաքինեաց. նախաշաւի՛ղ և առաջ նորոգ կենացըն յաւիտենից. ո՛վ սբ վը՟կայք՝. առ պըսակի՛ն մեզ և վ՟ն մեր բարեխօսեցէ՛ք. շնորհելով ողորմութի՟ն յանապատ աղբերէ՛ն կենացըն յա՛ւիտե՟նից։

գա գկ Ըզ ճգնութիւն սրբո՛ց մարտիրոսացն. բարեխօս ունի՛մք առ քե՛զ Քրի՟ստոս. և աղաչեմըք զքո՛

շնոր

շնորհեա՛ զթողութիւն յանցանաց
մերոց՝. և՚ի կեանսըդ յաւիտենից
նորոգեա՛ և ը՛ կե՟ցո՛։

Յոյս ծագեաց արդարոց՝. ուղղոց ող
սրտից եղև ուրախութի՟։

Ուրախ եղերուք արդարք ՚ի տ՟ր. և
խոստովան եղերուք յիշատակի սրբ-
ութե՟ նորա։ և ասացէ՛՛։

Պատուական է առաջի տ՟ն մահ սըր գկ
բոց իւրոց. ո՛ տ՟ր ես ծառայ քո եմ.
ծառայ և որդի աղախնոյ քոյ։

Հատեր ըզկապանս իմ. քեզ մատու-
ցից պատարագ օրհնութեան և զա-
նուն տ՟ն կարդացից։ և ասացէմըք
սուրբք շնորհեա՛ զթողու՛՛։

Հանդիսացեալք ՚ի մարտըս պատե- վ
րազմի՛ յաղթող դըրամք. տէ՟ ը՟ վը՟
ր՟ կայք. քանզի ճանապարհ հոր-
դեցիք ըմե՟զ յերկնային քաղաքն
յերուսաղէմ. ը՟ անմարմնոցն դասս
փառաւորելով տէ՟ ըներրորդութի՟ն։

Որք

գձ Որք 'ի խորանըս սրբութեան եմք ժողովեալ օրհնել զքեզ Քրիստոս. աղաչանօք սրբոց մարտիրոսաց ընդ պաղատանըս մեր մի անտես առներ. որ միայնդ ես բազումողորմ Թագաւոր փառաց Քս:

աղ Մերձ է տէր առ ամենեսեան որք կարդան առ նա. առ ամենեսեան որք կարդան առ նա ճշմարտութե.

Զկամս երկիւղածաց իւրոց առնէ տր. աղօթից նց լսէ և կեցուցանէ զնոսա: աղաչանօք սրբոցն, այս անուն: և այլ սրբոց մարտիրոս":

Առաքելոց և Մարգարէից այս է:

Ոչ են բանք և ոչ են խօսք որոց ոչ լսիցին ձայնք նոցա:

Ընդ ամ երկիր ել բարբառ նց. և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք նոցա: աղաչանօք սրբ":

փ Նահատակք եւ վկայք Քի աստուծոյ: ընդ հանուր տիեզե

րաց քարոզք փրկութեան. որք զան-
ձինս ձեր մատուցիք պատա-
րագ և զենումն Աստուծոյ հօր
'ի հոտ անուշից. ժողովելոցս 'ի կա-
տարել զյիշատակն անուան ձե-
րոյ. բարեխօսեցէք առ Տէր վասն քաւ-
ութեան մեղաց մերոց:

Ո երեքսրբեան տէրութիւնդ քո դկ
միաբան աղաչեմք լուր տէր.
աղաչանօք սրբոց մարտիրոսացն
խնայեա 'ի մեզ և ը կեցո:

Ուրախ լիցին ամենեքեան որք յու- սղ
սացեալ են 'ի քեզ. յաւիտեան ցըն-
ծասցեն. և բնակեսցես դու 'ի նոսա:
Պարծեսցին 'ի քեզ սիրելիք անուան
քո. զի օրհնեսցես դու զարդարն.
Տէր որպէս զինու հաճութեան քով պսա-
կեցեր ըզնոսա: աղաչանօք սրբոյն
այս անուն. և այլ սրբոց մար:

Տօնէ այսօր եկեղեցի սուրբ զյիշատա- վ
կըն ձեր սուրբ ը վկայք. որք

զօրութեամբ սբ. հոգւոյն վանեցէք ըզ պատերազմ չարին. և՛ի կամարըս լուսեղէնըս թագաւորեալք օրհնել սուրբ զԵրրորդութիւն.

Սրբոյն Ստեփաննոսի է ։

Այսօր դասք հրեշտակաց ուրախանան ընդ ծնընդութի սրբոյն Ստեփաննոսի նախավկային. Քանըզի դուչէ եկեղեցի քո Քրիստոս. ըզը՝ յաղթանակ մարտ հեղման արեան սորա ի վերայ ը՝ մեծի անուանըն քո Տէր.

Բազում համարձակութի է սորա առաջի այ ՚ի ձեռն հեղման սուրբ արեանն իւրոյ. քանզի յօժարութբ մատնեաց զանձն իւր չարաչար և դառըն տանջանաց վն մեծի անուանըն տն. Քանզի արհամարհելով անարգեաց զանցաւոր ըզ

կեանս

կեանս աշխարհիս և փափագելեաց յաւիտենականն կենացն. և միշտ և հանապազ ուրախանալ ընդ նոսա ի յաւուրս յանմեղապարտ յուրախ խոստովանութիւն.

Իանդերձեալ գոչէ եկեղեցի քո Քրիստոս. ընդ յաղթանակ մարտ հեղման արեան սորա ի վերայ ը մեծի անուանն քո Տէր.

Փառք Հօրն էականի Որդւոյն միածնի և ազատիչ սուրբ Հոգւոյն ընդ միասին յելէ. Փառք պատիւ և իշխանութիւն. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն.

Ու յորժամ շարժին երկինք և երկիր ի յահէ փառաց բանին Տեառն Աստուծոյ. Նոյնժամ նորոգուցանէ ընդ աջմէ իւրմէ ընդ սերովբէս անուան իւրոյ ի լուսեղէն խորանսն զուգաւորեալն.

Այժմ դասք հրեշտակաց 'ի ձեռնէն սրբա".

Աւէ

Ալէլուք Յովհաննէսեան քն Որ է ՚ի գիշերային ժամուն։

ած Ալէլուիայ. ալէլուիայ. ալէլու։
Տէր՛ հովուեսցէ զիս և
ինձ ինչ ոչ պակասեսցի։
՚Ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց
զիս. և առ ջուրըս հանգստեան
սնոյց զիս։

փ Ալէլուիայ. ալէլուիայ. ալէլուիայ։
Իջցէ՛ որպ̅ անձրև ՚ի վ̅ր գեղման.
որպ̅ ցօղ զի ցօղէ յերկիր։
Ծագեսցի՛ յաւուրս նր̅ արդարու-
թիւն. բազում խաղաղութի̅ մինչև
կատարեսցի լուսին։

Փառք

Վիճակք ելին ինձ ընդ ընտիրս, և ժառանգութիւն իմ հաճոյ եղև ինձ։

Օրհնեցից զտ͞ր՝ որ իմաստուն արար զիս, մինչ 'ի գիշերի ևս՝ խրատեցին զիս երիկամունք իմ։

Յառաջագոյն տեսանէի զտ͞ր առաջի իմ յա͞մ ժամ. զի է ընդաջմէ իմմէ, զի մի՛ սասանեցայց։

Վ͞ս այսորիկ՝ ուրախ եղև սիրտ իմ, և ցնծացաւ լեզու իմ. ևս և մարմին իմ՝ բնակեսցի յուսով։

Զի ո՛չ թողցես զանձն իմ 'ի դժոխս. և ո՛չ տացես սրբոյ քում տեսանել զապականութիւն.

Ցուցեր ինձ զճանապարհս քո կենաց · լցուցեր զիս ուրախութեամբ երեսաց քոց՝ ի քաղցրութենէ վայելչութեան աջոյ քո՝ մինչ իսպառ։

Լո՛ւր Տէ՛ր արդարութեան · և նայեա՛ ի խնդրուածս իմ. ունկն դիր աղօթից իմոց՝ զի ոչ շրթամբք նենգաւորօք։

Յերեսաց քոց՝ իրաւունք ինձ ելցեն, և աչք իմ տեսցեն զուղղութիւն։

Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր ի գիշերի · փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ յիս անիրաւութիւն։

Ոչ խօսեսցի բերան իմ զգործս որդւոց մարդկան · վասն բանից շրթանց քոց՝ ես պահեցից զճանապարհս խիստս։

Հաստատեա զգնացս իմ ի ճանապարհի քում, զի մի գայթագղեսցին գնացք իմ.

Ես առ քեզ Տէր կարդացի՝ զի լուար ինձ Աստուած, խոնարհեցո՛ առ իս զունկն քո · և լո՛ւր բանից իմոց։

Սքանչելի արարեր զողորմութիւնս քո՝ ո՛ փրկես զայնոսիկ, որք յուսացեալ են ի քեզ՝ յայնցանէ, որք հակառակ կան աջոյ քո։

Պահեա՛ զիս ո՟պ բիբ ական. ընդ հովանեաւ Թեւոց քոց ծածկեսցես զիս յերեսաց ամբարշտաց, որք տառապեցուցին զիս:

Թշնամիք զանձն իմ պաշարեցին. և 'ի ճարպս իւրեանց արգելին. և բերանք նոցա խօսեցան զամբարտաւանութի՟ն:

Մերժեցին զիս, և այժմ դարձեալ պատեցան զինև. ուշ եդին խոնարհեցուցանել զիս յերկիր:

Համարեցան ինձ որպէս առիւծ՝ զի պատրաստ յորս. և ո՟պ կորիւն առիւծու, զի նստի դարանեալ:

Արի տ՟ր՝ ժամանեա՛ ն՟ց, և խափանեա զն՟ս. փրկեա զանձն իմ յամբարշտաց, 'ի սրոյ և 'ի ձեռաց Թշնամւոյն:

Տ՟ր՝ կորո՛ զն՟ս յերկրէ. բաժանեա՛ և խափանեա զն՟ս 'ի կեանս իւրեանց:

Գաղտնեօք քովք՝ լցան որովայնք ն՟ց. յագեցան կերակրօք և Թողին զմնացուածս տղայոց իւրեանց:

Ես արդարու՟բ երևեցայց երեսաց քոց. և յագեցայց յերևելն փ՟ռց քոց:

Դատ արա ինձ ա՟ծ. և իրաւ արա ինձ 'ի դատաստանի իմում:

Յազգէ որ ո՛չ է ս՟բ, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։

Դու ա՟ծ հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ։

Առաքեա՛ տ՟ր զլոյս քո և զճշմարտութի՟ քո. զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս 'ի լեառն ս՟բ և 'ի յարկս քո։

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ. որ ուրախ առնէ զմանկութի՟ իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութե՟ ա՟ծ ա՟ծ իմ։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ, խոստովանեա՛ նմա՝ փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։

Ա՟ծ յօգնել ինձ նայեաց. և տէր յընկերել ինձ փութա՛։

Ամաչեսցեն և յամօթ լիցին, ոյք խնդրէին զանձն իմ. դարձցին յետս և ամաչեսցեն, ոյք խորհէին ինձ չար։

Դարձցին առժամայն ամաչեցեալք, ոյք ասէին ինձ վա՛շ վա՛շ։

Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ

ա

ա՟մքեան, որք խնդրեն զքեզ տ՟ր:

Ասասցեն յա՟մ ժամ՝ մեծ է ա՟ծ, որք
սիրեն զփրկութի՟ս քո:

Ես աղքատ և տնանկ եմ ա՟ծ՝ օգնեա՛ ինձ· օգնական և փրկիչ իմ ես
դու տ՟ր իմ՝ մի՛ յամենար:

Տո՛ւր զօրութի՟ ծառայի քո· կեցո՛
զորդի աղախնոյ քո· և արա՛ առ իս
նշան բարութեան:

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն·
զի դու տ՟ր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս: Փառք հօր″:

Երէ:

Շնորհեա՛ մեզ տէր ՚ի գիշերի զերկնային զխաղաղութի՟ն քո· և պահեա՛ զմեզ ՚ի պատրանաց թշնամւոյն ամենայաղթ զօրութ՟ե՝ ս՟բ խաչի քոյ: Տ՟ր ա՟ծ փրկութե՟ իմոյ· ՚ի տուէ կարդացի և գիշերի առաջի քոյ: Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՟ր· խոնարհեցո ունկն քո ՚ի խնդրուածս իմ: Եկեսցէ առ մեզ տ՟ր պահապան ՚ի քէն և պահեսցէ զմեզ յա՟մ ժամ: Առաքեա՛ ՚ի մեզ տ՟ր ըստ զօրումր՟յ խաչին որ պահեսցէ զմեզ յա՟մ ժամ։ Արժանի արա՛ տ՟ր զերեկս զայս խաղաղութ՟ և առանց փորձութ՟ անցո՛ ըզմեզ։ Արժանաւորեա՛ տ՟ր զգիշերս զայս խաղաղութ՟ և առանց մեղաց պահելով զմե՛զ։ Ընդ մեզ տ՟ր ած՟ գիտասջի՛ք հեթանոսք և պարտեցարո՛ւք. զի ած՟ ընդ մեզ է.

Եւ լո՛ւարուք զայս ՚ի ծագաց մինչև ՚ի ծագս երկրի՛. զի ած՟. Եւ հզօրացեալքդ պարտեցարո՛ւք. զի. Եւ զի թէ՛պա և դարձեալ զօրանայք՝ դարձեալ ՚ի պարտութ՟ մատնեսջի՛ք. զ։ Եւ զխորհուրդն զոր խորհիք խափանէ տ՟ր՛. զ։ Եւ զբանն զոր խօսիք մի՛ մնասցէ առ ձե՛զ. զի։ Եւ քանզի յերկիւղէ ձերմէ մեք ո՛չ երկիցուք և ո՛չ խռովեսցո՛ւք. զ։ Եւ զտ՟ր ած՟ մեր փառաւոր արասցուք և նա եղիցի մեզ յերկի՛ւղ. զ։ Եւ յուսացեալ եղիցուք մեք ՚ի նա և նա՛ եղիցի մեզ ՚ի սրբութ՟. զի։ Եւ յուսացեալ եղիցուք մեք ՚ի նա և նա՛ եղիցի մեզ ՚ի փրկութ՟՛. զի։ Եւ ահաւասիկ ես և մանկունք իմ զոր ետ ինձ

ած-

ած՛. ղէ: Եւ ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ ետես ըդ լոյս մեծ՛. ղէ: Եւ որ բնակեալդ էք ի խաւարի և ի ստուերս մահու՝ լոյս ծագեսցի առ ձեզ՛. ղէ: Եւ քանզի մանուկ ծընաւ որդի և տուաւ մեզ՛. ղէ ած: Եւ որոյ իշխանութի՟ իւր ի վր՟ ուսոց իւրոց՛. ղէ: Եւ որ կոչի անուն նր՟ մեծի խորհրդոյ հրեշտկ՟. ղէ: Եւ սքանչելի խորհրդակից՛. ղէ: Եւ ած՟ հըզօր իշխան՛. ղէ: Եւ իշխան խաղաղութե՟ հայր հանդերձելոյ յաւիտենից՛. Որ ած՟ ը՟ մեզ է: Եւ փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:

Այժմ և միշտ և":

մաղ ՚Ի մերձենալ երեկոյին՝ համբառնամք զձեռս մեր ի սրբութի՟. զոր ինչ մեղաք այսօր խորհրդով բանիւ կամ գործով՝ ի յանկողինս մեր զղջանալով: Աստ՟ծ եղիցուք զդատաստանս սրտից մերոց ծածկագիտին այ՟. յուսալով յողորմութի՟ քո: Եւ մեք միաբան գոհեսցուք՝ յիշեա զմեզ տէր յորժամ գաս արքայութե՟ քով և ողորմեա մեզ:

Եւ ևս խաղաղութեան զտէր աղ։

Գոհացարուք զտէրն որ իւրով ողորմութեն առաջնորդեաց մեզ ՚ի գործս սուրբ ընծայեան. և շնորհեաց մեզ միաբան գալ հասանել ՚ի հանգիստ գիշերիս։ Եւ մեք յամ ժամ աղաչեսցուք զմարդասէրն ած լինել պահպան անձանց մերոց. և նա իւրով ողորմութեն պահեսցէ զմեզ. և առաջնորդել հասուսցէ յիւր բարութե հանգստեան. զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ճշմարիտն ած յուք։

գրէ

Տրն ամենակալ կեցուս։

Օ հանգիստ գիշերիս խաղաղաւոր։

Օ հրեշտակ խա։ Օ քաւութի։

Օ տէր խա։ Եւ ևս միա։ Օ ան։

Ողորմեաց մեզ։

Տէր բարերար որ մեծաւ գթութեքով պատրաստեցեր զյաւիտենական հանգիստն առաքինութեանց աշխատելոցն. և կոչեցեր առ քեզ քաղցր ձայնիւ զծանրաբեռնեալսն և զտաժանեալսն մեղօք՝ հանգիստ նց խոստանալով։ Շնորհեա և մեզ տր անխռով

առ

խռով խաղաղութ՟բ զգիշերս անցուցանել. և ՚ի ծանրութ՟է մեղաց զաշխատեալքս՝ ապահովու՟եամ ողորմութ՟բ քով. և արժանաւորեա՛ մշտնջենաւոր հանգստեանն ընդ ա՟մ ս՟բս քո։

Եւ գոհանալով փառաւորեսցուք զքեզ ը՟ հօր և ամենաս՟բ հոգւոյդ։

Այժմ և միշտ և″։

Խաղաղութիւն Ամենեցուն։

Պարգևատու բարեաց և աղբիւր խաղաղութ՟ե որ ա՟ծ մեր յա՟մ սատանայական խռովութ՟եց խաղաղացո՛ ըզ միտս մեր և զխորհուրդս ՚ի գիշերիս յայսմիկ և յա՟մ ժամանակի։ Ո՟պ զի առաջնորդեալք յանցաւոր կենցաղոյս՝ ժամանեսցուք յաւիտենական երկնից արքայութ՟ն քո. զոր պատրաստեցեր ՚ի սկզբանէ ա՟շի ս՟բց քոց։

Եւ ընդ նմին գոհանալով փ՟րեսցուք զ՟հայր և զորդի և զ՟սբ հո″։

Սաղմոս, 26։

Տ՟ր լոյս իմ և կեանք իմ՝ ես յումմէ՞ երկեայց. տ՟ր ապաւէն կենաց իմոց՝ ես յումմէ՞ դողացայց։

՚Ի մերձենալ առ իս չարաց՝ ուտել զմարմինս իմ. նեղիչք իմ և թշնամիք իմ, նոքա տկարացան և անկան։

Թէ պատարաստասցի ՚ի վ՟ր իմ պատերազմ, ոչ երկիցէ սիրտ իմ. և թէ յարիցէ ՚ի վ՟ր իմ ճակատամարտ, սակայն և այսուիկ ՚ի քեզ տ՟ր յուսացայ։

Զմի խնդրեցի ՚ի տ՟նէ, և զայն աղաչեմ. բնակել ինձ ՚ի տան տ՟ն զա՟մ աւուրս կենաց իմոց։

Տեսանել ինձ զվայելչութիւն տ՟ն. և հրամանս տալ ՚ի տաճարի ն՟ր։

Ծածկեաց զիս ՚ի խորանի իւրում յաւուր չարի. ընդ յարկաւ արար զիս ՚ի ծածկոյթ խորանի իւրում։

՚Ի վիմէ բարձր արարեր զիս. և այժմ բարձր արա զգլուխ իմ ՚ի վերայ թշնամեաց իմոց։

Շուրջ եղէց և մատուցից ՚ի խորանի նորա պատարագ օրհնութեան. օրհնեցից և սաղմոս ասացից տ՟ն։

Լուր տ՟ր ձայնի իմում զի կարդացի առ քեզ. ողորմեա ինձ և լուր ինձ՝ զի քեզ անսաց սիրտ իմ. և խնդրեցին երեսք րեալք իմ՝ զերեսս քո տր խնդրեցին։

Մի դարձուցաներ զերեսս քո յինէն. եւ մի խոտորիր բարկութեամբ 'ի ծառայէ քումմէ։

Օգնական իմ լեր տր՝ մի անարգեր զիս. եւ մի թողուր զիս ած փրկիչ իմ։

Հայր իմ եւ մայր իմ թողին զիս. եւ տր իմ ընկալաւ զիս։

Օրէնսդիր արա զիս տր 'ի ճանապարհի քում. եւ առաջնորդեա ինձ 'ի շաւիղս քո ուղիղս։

Վասն թշնամեաց իմոց, մի մատներ զիս 'ի ձեռս նեղչաց իմոց։

Յարեան 'ի վր իմ վկայք մեղաց. եւ ստեցին ինձ յանօրէնութիւն իւրեանց։

Հաւատամ տեսանել զբարութիւն տն յերկրին կենդանեաց. համբեր տն եւ քաջալերեաց. զօրասցի սիրտ քո եւ համբեր տն։ Փառք Հօր"։

Սրկ Ձեառն 'ի Երուսէմ.

այեւոց սիրով հայրբր գթած 'ի քո ստեղծեալ գործս ձեռաց. եւ ընդունակս հրեշտակաց կայ՝ տո՛ւր պահապան մեզ տըկարացս. փրկեա՛ զանձինս ՚ի փորձանաց՝ ՚ի խաւարի շրջող դիւ՛աց. զի՛ ՚ի տուընջեան և ՚ի գիշերի՝ տացուք քեզ փառս անլըռելի՛։ Լոյսն անեղ անըսկի՛զբան՝ ծընունդ անճառ որդի և բան. որ արարեր ըզ տի՛ւ գործոյ՝ և ը՛զ գիշեր ՚ի հանգիստ քնոյ. տո՛ւր ՚ի նընջել աչաց մարմնոյ՝ արթուն լինել մեզ ըստ հոգւոյ. զի՛։ Րաբուն հոգւոց բանաւորաց՝ աղբիւր լուսոյ բաշխող շնորհաց՝. ՚ի փակել դըրանց բնութեց մարմնոց՝ լո՛յս տուր աչաց սըրտից մերոց՝. ՚ի գիշերաց առ քեզ կանխել՝ ընդ հրեղինացն օրհնաբանել. զի՛։ Սուրբըդ սրբոց երրորդութի՝ ըզ մեզ մաքրեա՛ քեզ բնակութ̄ի՝. շնորհեա՛ ը՛նդ մանկանցն առագաստի՝ հանգչել ընդ քեզ ՚ի՛ յանկողնի՝. տո՛ւր ըզհայցո՛ւած բարեկամին՝ ըզփոխ երից նըկանակին՝. զի՛։ Լուսելի լոյս ըստեղծեր՝ զտի՛ւ և զգիշեր բաժանեցեր՝. ծագեա՛ մեզ տ̄ր ՚ի գիշերի՝ ըզճառագայթս խնա-

նա

նայլի․ տուր յամ ժամանակի զպահ պանօղ ոջ քո Հովանի․ զի․ Սիրոյ քո Հուր արկեալ յերկիր՝ բորբոքեսցի 'ի Հոգիս մեր․ զխորՀուրդ սրտից մեր մաքրեսցէ՝ զլոյս գիտութեան քո փայլեսցէ՝․ 'ի քնոյ մաՀու զմեզ զարթուսցէ՝ զմիտքս բոցով քո վառուեսցէ․ զի՛․ 'Ի քեզ նայիմք լոյս անմատոյց՝ 'ի զգոյական ծագեալ լուսոյ․ որ վասն մեր եդար 'ի գբի և նըննջեցեր 'ի տապանի․ առ մեզ նըն ջեա՛ արթուն բնութի՝ Հերքեա՛ զչարին ներգործութի․ զի՛․ Որդ լուսոյ անըստուերի՝ պաղատանօք կամք առաջի․ որ փակեալ դրամբք յերեկոյին՝ երևեցար մետասանին․ ընդ Թօմայի առ քեզ գոչեմք՝ տ̄ր և ա̄ծ զքեզ դաւանեմք․ է՛ջ և առ մեզ յերեկոյիս՝ և տուր զողջոյն քո 'ի Հոգիս։ Սամեալքս ըզքեզ տ̄ր աղաչեմք՝ մեզ յօգնութի նայեալ Հայցեմք․ պաՀապանդ իսրայէլի՝ անձանց մերոց լե՛ր Հովանի․ օթեա՛ առ մեզ խաղաղարար զի ննջեսցուք անխռովաբար․ և՛

ընդ առաւօտըս կանխեսցուք՝ օրհ-
նել ըզքեզ ընդ Հօր Հոգւովն։

Գոչման փողոյն գաբրիէլի՝ որ ՚ի վերջ
նումին գիշերի· լսել արա զմեզ ար-
ժանի՝ եւ յաջակողմն օթեւաց դասի·
անշէջ վառեալ զլոյս լապտերաց՝ ըստ
իմաստուն Հինգ կուսանաց՝ · զի՛ ընդ
փեսայիդ ՚ի յառագաստ՝ Հարսունք
Հոգւով մտցուք ՚ի փառս։

Հալածեա՛ ՚ի մէնջ տ՟ր նշանաւ խա-
չի քո՝ · զընդդիմամարտս եւ զաներեւ-
ոյթ գազանն՝ · եւ մի՛ տար յապակա-
նութիւն զքո ժառանգութիւնս։

Բարեխօսեա՛ վասըն մեր ա՟ծածին
մարիամ՝ · որ ծընար զտ՟ր աստուա՛ծ
որ Հովուէրըն զէնէլ՝ · ա՛մենազօր եւ
սքանչելի փառօքն իւրովք·

Մաղթանք·

Տ՟ր մի՛ դարձուցաներ զերեսս քո յի-
նէն։ Տ՟ր բարերար աղաչեմ զքեզ
օգնական իմ լեր։ Տ՟ր մի՛ անարգեր
զիս · եւ մի՛ թողուր զիս ա՟ծ փրկիչ իմ։

Ք

Քարոզ։

Աղաչեսցուք զամենակալն ա͞ծ և խնդրեսցուք ՚ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութե͞ն որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղական գիշերիս. ՚ի դիւական խռովութե͞ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կ͞տրումն Ժ͞մնկի ամաց մերոց։ ամ͞ն։

Աղօթք։

Շնորհատու բարերար՝ յա͞մի առատ անմահ տ͞ր. աղաչեմք զքեզ փարատեա՛ յանձանց մերոց զաղջամղջին և զխաւարային խորհուրդս։ ՚ի պատրանաց բանսարկուին պահեա՛ զմեզ և շնորհեա՛ մեզ հաւատով ապաւինիլ յամենասուրբ Երրորդութի͞դ ՚ի հայր և յորդի և ՚ի ս͞բ հոգիդ այժմ և"։

Սաղմոս, 118։

Երանեալ են անբիծք ՚ի ճանապարհի, և որք գնան յօրէնս տ͞ն։ Երանի, որք քննեն զվկայութի͞ս ն͞ր. բոլորով սրտիւ իւրեանց խնդրեսցեն զնա։

Ո՛չ թէ ոյք գործեն զանօրէնութի՟, ՚ի ճանապարհս նր՟ գնացեն։ Դու պատուիրեցեր զպատուիրանս քո՝ ՚ի պահել յոյժ։ Երանի թէ յաջողել էին ինձ ճանապարհք իմ, ՚ի պահել ինձ զարդարութի՟ս քո։ Յայնժամ ես ո՛չ ամաչէի, ՚ի զգուշանալ ինձ ՚ի պատուիրանս քո։ Խոստովան եղէց քեզ տր՟ յուղղութե՟ սրտի իմոյ, որպ՟ ուսայց զիրաւունս արդարութե՟ քո։ Զիրաւունս քո պահեցից,
մի՛ թողուր զիս մինչ իսպառ։

Իւ՞ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր. այլ ՚ի պահել զբանս քո։ Բոլորով սրտիւ՟ իմով խնդրեցի ըզքեզ. մի՛ մերժեր զիս ՚ի պատուիրանաց քոց։ Ի սրտի իմում թագուցի զբանս քո, որպ՟ զի մի՛ մեղայց քեզ։ Օրհնեալ ես դու տր՟. ուսո՛ ինձ զարդարութի՟ս քո։ Շրթամբք իմովք պատմեցից զա՟մ իրաւունս բերանոյ քոյ։ Ի ճանապարհս վկայութե՟ց քոց զուարճացայ, որպ՟ յա՟մ ՚ի մեծութե՟։ Ի պատուիրանս քո հոգացայ, և

զգուշացայ ՚ի ճանապարհս քո :
Զիրաւունս քո խօսեցայ, և ոչ մոռացայ զբանս քո : Հաստա՛ ծառայի քում, զի կեցից և պահեցից զբանս քո : Զարթո՛ զաչս իմ ; և նայեցայց ՚ի սքանչելիս օրինաց քոց :
Պանդուխտ եմ ես յերկրի . մի՛ թաքուցաներ յինէն զպատուիրանս քո : Փափագեաց անձն իմ, ՚ի ցանկալ ինձ յիրաւունս քո յա̃մ ժամ : Սաստեցեր ամբարտաւանից . անիծե̃լ՝ որք խոտորեցան ՚ի պատուիրանաց քոց . ՚Ի բա՛ց արա յինէն զնախատինս և զարհամարհանս . զի զվկայութիս քո խնդրեցի : Քանզի նստան իշխանք և չարախօսէին զինէն . այլ ծառայ քո խորհէր յիրաւունս քո :
Զի վկայութիք քո խօսք իմ էին . և խորհուրդք իմ յարդարուի̃ քո . Մերձեցաւ անձն իմ ՚ի հող . տէ՛ր կեցո՛ զիս ըստ բանի քում :
Զձեռս իմ պատմեցի քեզ՝ և լուա՛ր ինձ . ուսո՛ ինձ զարդարութիս քո . ՚Ի ճանապարհս արդարութեց քոց

իմաս

իմաստուն արա զիս. և քննեցից զսքանչելիս քո։ Տքնեցաւ անձն իմ առ՚ի ձանձրանալ. հաստատեա՛ զիս ՚ի բանս քո։ Զճանապարհս մեղաց ՚ի բա՛ց արա յինէն. և յօրէնս քո ողորմեա՛ ինձ։ Զճանապարհս ճշմարտութե՟ քո ընտրեցի. և զիրաւունս քո ես ո՛չ մոռացայ։ Մերձեցայ ես ՚ի վկայութի՟ս քո, տ՟ր մի՛ յամօթ առներ զիս։ ՚Ի ճանապարհս պատուիրանաց քոց ընթացայ. զի անդորր արարեր սրտի իմոյ։ Օրէնսգէ՛տ արա զիս տ՟ր, ՚ի ճանապարհս իրաւանց քոց. և խնդրեցից զնա յա՟մ ժամ։

Իմաստուն արա զիս. տ՟ր և քննեցից զօրէնս քո, և պահեցից զնա բոլորով սրտիւ իմով։ Առաջնորդեա՛ ինձ ՚ի շաւիղս պատուիրանաց քոց. զի ընդ ն՟ա հաճեցայ։ Խոնարհեցո՛ ըզսիրտ իմ ՚ի վկայութիւնս քո, և մի՛ յագահութիւն։ Դարձո՛ զաչս իմ, զի մի՛ տեսից զնանրութի՟. ՚ի ճանապարհս քո կեցո՛ զիս։ Հաստատեա՛ ծառայի քում՝ զբանս քո յերկիւղ քո։

Հա՛ն յինէն զնախատինս, զոր և կարծեցի․ զի դատաստանք քո քաղցր են․

Ահա ցանկացայ պատուիրանաց քոց, յարդարութե՟ քում կեցո՛ զիս։

Եկեսցէ 'ի վ՟ր իմ ողորմութի քո տ՟ր․ և փրկութի քո ըստ բանի քում։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւք․ զի ես 'ի բանս քո յուսացայ։ Մի 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչև յոյժ․ զի յիրաւունս քո յուսացայ։ Պահեցի զօրէնս քո յա՟մ ժամ, յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։ Գնայի ես յանդորրու․ զի զպատուիրանս քո խնդրեցի։ Խօսէի ըղ վկայութիս քո առաջի թագաւորաց, և ոչ ամաչէի։ Խորհէի 'ի պատուիրանս քո, զոր սիրեցի։ Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի․ և խորհէի յարդարութե՟ քում։ Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր և յուսացուցեր զիս։ Սա մխիթարեսցէ զիս 'ի խոնարհութեան իմում․ զի բան քո կեցոյց զիս․

Ամ

Ամբարտաւանք անիրաւեցան յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ· Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր, և մխիթարեցայ·
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո·
Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի տեղւոջ պանդխտութեան իմոյ։
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տէր· և պահեցի զօրէնս քո։
Այս եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս· զի զարդարութիւնս քո խնդրեցի։

Բաժին իմ ես դու տէր, ասացի պահել ինձ զօրէնս քո։ Աղաչեցի զերեսս քո բոլորով սրտիւ իմով· ողորմեա ինձ ըստ բանի քում։ Խորհեցայ ՚ի ճանապարհս իմ· և դարձուցի զոտս իմ ՚ի վկայութիւնս քո։
Պատրաստեցայ՝ և ոչ խռովեցայ· զի պահեցի զպատուիրանս քո։
Տոռունք մեղաց պատեցան զինև· այլ զօրէնս քո ես ոչ մոռացայ։
՚Ի մէջ գիշերի յառնէի խոստովան լի

նել

նիլ առ քեզ, վասն իրաւանց և ար
դարութ՟ե քո։ Հաղորդ էի ես ամ՟
երկիւղածաց քոց․ որոց պահեալ
էին զպատուիրանս քո։
Ողորմութեամբ տ՟ր լի եղև երկիր․
զարդարութ՟իս քո ուսո ինձ։
Քաղցրութ՟ի արարեր ընդ ծառայի
քում տ՟ր, ըստ բանի քում։
Քաղցրութ՟ի, զխրատ, և զգիտութ՟ի ու
սո ինձ․ զի ՚ի պատուիրանս քո ես հա
ւատացի։ Մինչչև խոնարհ՟ել էի ես
մեղայ․ վ՟նկ զբանս քո պահեցի յոյժ։
Քաղցր ես դու տ՟ր, և քաղցրութ՟ե
քով ուսո ինձ զարդարութիս քո։
Բազմացան յիս անիրաւութ՟իք ամ
բարտաւանիցն․ այլ ես բոլորով սրտի՟
իմով քննեցի զպատուիրանս քո․
Մածան որպ՟ս կաթն սիրտք նոցա․
այլ ես զօրէնս քո խօսեցայ։
Բարի է ինձ, զի խոնարհ արարեր զիս․
ոպ՟ ուսայց զարդարութ՟իս քո․
Բարի են ինձ օրէնք բերանոյ քոյ,
քան զհազարս ոսկւոյ և արծաթոյ․
Ձեռք քո արարին՝ և ստեղծին զիս

իմաս

իմաստուն արա զիս և ուսայց զպա-
տուիրանս քո։ Երկիւղածք քո տես-
ցեն զիս՝ և ուրախ եղիցին. զի ես 'ի
բանս քո յուսացայ։ Ծանեայ տ̅ր՝ զի
արդարութ̅ե են դատաստանք քո.
յիրաւի՛ խոնարհեցուցեր զիս։
Եղիցի ողորմութ̅ի քո 'ի մխիթարել
զիս. ըստ բանի քում, զծառայս քո։
Եկեսցեն յիս գթութիւնք քո՝ և կե-
ցից. զի օրէնք քո խոկք իմ էին։
Ամաչեսցեն ամբարտաւանք՝ որք 'ի
տարապարտուց անիրաւեցան յիս.
այլ ես հոգացայ 'ի պատուիրանս քո։
Խրատեսցեն զիս երկիւղածք քո,
և որք ճանաչեն զվկայութ̅իս քո։
Եղիցի սիրտ իմ անբիծ յարդարու-
թ̅ե քում. զի մի՛ ամաչեցից։
Կարօտացաւ անձն իմ 'ի փրկութ̅ես
քո. զի ես 'ի բանս քո յուսացայ։
Սպասեցին աչք իմ բանի քում. ա-
սացի երբ մխիթարեսցես զիս։
Եղէ ես ո̅պ տիկ 'ի պարզի. զի զար-
դարութ̅իս քո ես ոչ մոռացայ։
Քանի՞ ինչ են աւուրք ծառայի քո.

երբ

երբ արասցես ինձ իրաւունս 'ի հալածչաց իմոց։ Պատմեցին ինձ անօրէնք զխորհուրդս. այլ ո՛չ ո՟պ զօրէնս քո։ Ամենայն պատուիրանք քո ճշմարիտ են. 'ի նանիր հալածեցին զիս, օգնեա՛ ինձ։ Փոքր մի ևս՝ և կորուսանէին զիս յերկրի. այլ ես ո՛չ թողի զպատուիրանս քո։ Ըստ ողորմութեան քում կեցո՛ զիս. և պահեցից
զվկայութիւնս բերանոյ քո։
Յաւիտեան տէ՛ր՝ բան քո կայ յերկինս. ազգէ մինչև յազգէ ճշմարտութի՟ քո։ Հաստատեցեր զերկիր՝ և կայ։ Հրամանի քում մնայ տի՟ւ.
զի ա՟մքեան ծառայք քո են։
Եթէ ո՛չ օրէնք քո խօսք իմ էին, կանխաւ ևս արդեօք կորուսեալ էի
'ի խոնարհութեան իմում։
Յաւիտեան ո՛չ մոռացայց զարդարութի՟ս քո. զի՟ նոքօք կեցուցեր զիս։ Քո եմ ես, և կեցո՛ զիս. զի՟ զարդարութիւնս քո խնդրեցի։ Ինձ ապասեցին մեղաւորք 'ի կորուսանել. զի՟ զվկայութիւնս քո ես. 'ի միտ առի.

Յա՟մ կատարածի տեսի զվախճան. յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո։ Ո՟պ սիրեցի զօրէնս քո. զօրհանապազ խօսք իմ էին։ Քան զթշնամիս իմ իմաստուն արարեր զիս ՚ի պատուիրանս քո. զի յաւիտեան իմ էին։ Քան զա՟մ ուսուցիչս իմ իմաստուն եղէ. զի վկայութիւնք քո խօսք իմ էին։ Քան զծերսն իմաստուն եղէ. զի զպատուիրանս քո քննեցի։ Յա՟մ ճանապարհաց չարաց արգելի զոտս իմ. ո՟պ զի պահեցից զբանս քո։

Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ. զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Ո՟պ զի քաղցր են ՚ի քիմս իմ բանք քո քան զմեղր՝ բերանոյ իմոյ։

՚Ի պատուիրանաց քոց իմացեալ՝ ատեցի զա՟մ ճանապարհս չարաց. զի դու օրէնսդէտ արարեր զիս։

Ճրագ են բանք քո ոտից իմոց, և լոյս տան շաւղաց իմոց։ Երդուայ և հաստատեցի. զի պահեցից զա՟մ իրաւունս արդարութեան քո։

Խոնարհ եղէ մինչև յոյժ. տ՟ր՝ կեցո՛

զիս

զիս ըստ բանի քում։ Ընդ կամս բերանոյ իմոյ հաճեսցի՛ս տ՟ր․ և զիրաւունս քո ուսո՛ ինձ։ Անձն իմ ՚ի ձեռս քո է յա՟մ ժամ․ և զօրէնս քո ես ոչ մոռացայ։ Եդին ինձ մեղաւորք զորոգայթ․ ՚ի պատուիրանաց քոց ես ոչ մոլորեցայ։ Ժառանգեցի զվկայութիւնս քո յաւիտեան․ զի ցնծութի՟ է սրտի իմոյ։ Խոնարհեցուցի զսիրտ իմ, առնել զարդարութիւնս քո յաւիտեան, վ՟ս հատուցմանն։ Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։ Օգնական և փրկիչ իմ ես դու․ և ես ՚ի բանս քո յուսացայ։ ՚Ի բաց եղերուք յինէն չարք․ և քըննեցից զպատուիրանս ա՟յ իմոյ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս․ և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ։ Օգնեա՛ ինձ․ և ապրեցո՛ զիս․ և խորհեցայց յիրաւունս քո յա՟մ ժամ։ Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութե՟ց քոց․ զի անիրաւութ՟բ էին խորհուրդք նոցա։ Յանցաւորս հա

մարեցոյ զա՟մ մեղաւորս երկրի . վ՟ այսորիկ՝ սիրեցի զպատուիրանս քո ։ Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ . զի ՚ի դատաստանաց քոց
երկեայց յոյժ ։

Արարի իրաւունս եւ արդարութի՟ . մի՟ մատներ զիս ՚ի ձեռս նեղչաց իմոց ։ Ընկա՛լ զծառայս քո ՚ի բարի . զի մի՟ ամբարտաւանք զզուեսցեն զիս ։ Ապասեցին աչք իմ փրկութե՟ քում տ՟ր . եւ բանից արդարութե՟ քո ։ Արա՛ ընդ ծառայի քում տ՟ր ըստ ողորմութեան քում . զարդարութի՟ս քո ուսո՛ ինձ ։ Ծառայ քո եմ ես , իմաստո՛ւն արա զիս , եւ ծանեայց զվկայութի՟ս քո ։ Ժամ է պաշտել զտ՟ր . խափանեցին զօրէնս քո ։ Վ՟ այսորիկ սիրեցի զպատուիրանս քո
քան զա՟մ ոսկի եւ զտպազիոն ,

Ամ՟ պատուիրանք քո յաջողեցան ինձ . զի ատեցի ես զճանապարհս չարաց ։ Սքանչելի են վկայութի՟ք քո , վ՟ այսորիկ սիրեաց զնո՟ անձն իմ ։

Յայտնութիւն բանից քոց լուսաւոր է, և իմաստուն առնէ զտղայս։

Զբերան իմ բացի, և առի զհոգի. ՚ի պատուիրանս քո փափագեաց անձն իմ.

Նայեա՛ առ իս և ողորմեա՛ ինձ, ըստ իրաւունս սիրողաց անուան քո։

Զճանապարհս իմ ուղի՛ղ արա ինձ ըստ բանի քում. և մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք։ Փրկեա՛ զիս ՚ի դըրպարտութենէ մարդկան. և պահեցից զպատուիրանս քո։ Երևեցո՛ զերեսս քո ՚ի ծառայս քո, և ուսո՛ ինձ զարդարութիւնս քո։ Առուակք ջուրց իջին յաչաց իմոց. զի ոչ պահեցին զօրէնս քո։ Արդար ես դու Տէր, և ուղիղ են դատաստանք քո։

Պատուիրեցեր զարդարութիւն վկայութեանց քոց. և ճշմարիտ են յոյժ.

Մաշեաց զիս նախանձ քո, զի մոռացան զբանս քո թշնամիք իմ։

Ընտրեալ է բան քո յոյժ, և ծառայ քո սիրեաց զսա՛։ Մանուկ եմ ես և արհամարհեա՛լ. և զարդարութիւնս քո ես ոչ մոռացայ։ Արդարութիւն քո՝

արդարութիւն յաւիտենից. և օրէնք
քո ճշմարիտ են. Նեղութիւնք և
վիշտք գտին զիս. և պատուիրանք քո
խօսք իմ էին։ Արդարութեամբ են
վկայութիւնք քո յաւիտեան. իմաստուն
արա և կեցո զիս։ Աղաղակեցի առ քեզ
բոլորով սրտիւ իմով. լուր ինձ տ̅ր,
զի զարդարութիւնս քո խնդրեցից.
Աղաղակեցի առ քեզ՝ և փրկեա զիս.
և պահեցից զվկայութիւնս քո։
Կանխեցի տարաժամու՝ աղաղակեցի.
և ես ՚ի բանս քո յուսացայ։
Կանխեցին աչք իմ առաւօտու, ՚ի
խօսել ինձ զբանս քո։ Զձայնի իմում
լուր տ̅ր՝ ըստ ողորմութեան քում.
և յիրաւունս քո կեցո զիս։
Մերձեցուցին յիս հալածիչք իմ
զանօրէնութիւն. զի յօրինաց քոց հեռի
եղեն։ Մերձ ես դու տ̅ր. և ամ̅
պատուիրանք քո ճշմարիտ են։
՚Ի սկզբանէ ծանեայ ՚ի վկայութեանց
քոց. զի յաւիտեան հաստատեցեր զն̅ս.
Տես զխոնարհութիւն իմ, և փրկեա
զիս. զի զօրէնս քո ես ոչ մոռացայ։

Դատեա՛ զդատաստանս իմ, և փրկեա
զիս . և ըստ բանի քում կեցո՛ զիս:

Հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն,
զի զիրաւունս քո ո՛չ պահեցին:

Գթութիւնք քո բազում են տ՟ր,
ըստ իրաւանց քոց կեցո՛ զիս:

Բազում են, որք հալածեն և նեղեն
զիս . 'ի վկայութենէ քոյ ես ո՛չ խոտորեցայ: Տեսի յանագորոյնս՝ և մաշէի, զի զպատուիրանս քո ո՛չ պահեցին:

Տե՛ս՝ զի զպատուիրանս քո սիրեցի .
տ՟ր՝ ողորմութեամբ քով կեցո՛ զիս:

Սկիզբն բանից քոց ճշմարտուի է .
յաւիտեան են ամ՟ իրաւունք արդարութեան քո: Իշխանք հալածեցին զիս 'ի նանիր . և 'ի բանից քոց երկեաւ սիրտ իմ: Ցնծացայ ես 'ի բանս քո, ո՟պ այն՝ որ գտանէ աւար բազում: Զմեղս ատեցի և անարգեցի, և զօրէնս քո սիրեցի:

Եօթն անգամ յաւուր օրհնեցից ըզքեզ, վ՟ս իրաւանց և արդարուե՟ քո:

Խաղաղութիւն բազում է այնոցիկ՝
ոյք սիրեն զօրէնս քո . և ո՛չ գոյ 'ի

նո՟

ն՟ն գայթակղութ՟ի։ Սպասեցի փրկու՟ե քում տ՟ր, և զպատուիրանս քո սիրեցի։ Պահեաց անձն իմ զվկայութիւնս քո, և սիրեաց զն՟ն յոյժ։ Պահեցից զպատուիրանս՝ և զվկայութիւնս քո. զի ա՟մ ճանապարհք իմ առաջի քոյ են։ Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տ՟ր. ըստ բանի քում իմաստուն արա զիս։ Մտցեն աղօթք իմ առաջի քո տ՟ր. և բանիւ քով փրկեա զիս։ Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիւնս քո, յորժամ ուսուսցես ինձ զարդարութիւնս քո։ Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ա՟մ պատուիրանք քո արդարու՟թ են։ Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։ Ցանկացայ փրկու՟ե քում տ՟ր. և օրէնք քո խօսք իմ էին։ Կեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։ Մոլորեցայ ես ո՟պ զոչխար կորուսեալ. խնդրեա զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ոչ մոռացայ։

Փառք Հօր և Որդւոյ և՟։

Իրու. չինէ առէ շաբաթնան.

Ի քէն հայցեմք հայր գթութեց և ած մխիթարութեանց. ի տխրական գիշերոյին մերձեալ ժամուս. մխիթարեա զմեզ ի տրտմութեց մեղաց. և շնորհեա զուրախութիւն գործովք արդարութե. աղաչանօք սրբ մե ածածնին և ամենայն արդարոց:

Սա քաղցրագոյն ածային քո հրամանի կոչմամբ որդի աստուծոյ. եկեալ եմք առաջի քո յերեկոյիս տխրամտեալք և ծանրաբեռնեալք. թեթևացո ի ծանրութեց մեղաց զանձինս. և զօրացո բառնալ կամաւ զքաղցր լուծ քոյ պատուիրանաց. աղաչեմ: Պաղատիմք առ քեզ հոգւով ի հանգստեան հասեալ ժամուս մարդասէր հոգի աստուծոյ. յորժամ նորոգես զերեսս երկրի և վերըստին ըստամնան զոդելս մարդկան՝. նորափետուր զարդարեալ ըզ ննջեցելսն մեր ըզ ծնեալսն ի քէն սբ աւազանաւն՝. աղա: Ո կենդանադիր անարատ ծնողի քո արկանեմք առաջի անոխակալ տրութե ըդ քո՝. յորժամ գաս փառօք հօր դատել ըզ թշնամին խաչի քոյ՝. ներեա յանցանաց մերոց բարեխօսութբ մօր քո և կուսի՝. աղաչեմք ըզ քեզ տէր պահպանեա ըզ մեզ ընդ հովանեաւ խաչի քո սուրբ: Հաղորդս արա և զմեզ տէր՝ ընդ սրբոց քոց առաքելոցն. որք արժանի եղեն տեսանել ըզ քեզ ի յարութեան քո՝. արժանաւորեա տէմ մր տեսանել ըզ քեզ ի միւսանգամ քո գալըստեանն՝. օրհնութի առաքողին ի բարձունս: Ի նըստիլ քո յատենի դատաւոր ահեղ. աղա

չանօք սբ̅ Ա̅ծածնին՝ յիշեա ընդ ըն
ջեցեալ լորն ըմբռ. յորժամ գայցես
անճառ փառօք. քանզի քո են փառ
ք յաւիտեանս ամէն։

ԴՀ Սրբուհի Մարիամ. սափոր
ոսկի և տապանակ կտակարանաց.
որ զ՚ի վերուստ ըդ հացն կե
նաց պարգևեցեր քաղցեալ բնութեան.
առ նա միշտ բարեխօսեա վասըն
քաւութեան մեղաց մերոց։
Դրունք անմարմնոց հրեշտակաց.
քեզ երանեն ամէնօրհնեալ կոյս Մա
րիամ. որ զէակից Բանն որ
ընդ Հօր կրեցեր ՚ի քեզ անսերմնա
պէս. առ նա միշտ բարեխօսեա վ̅ն
քաւու̅։ Սմին որոյ և մեք հաւա
տացեալքս քեզ երկիր պագանեմք քո
և արտասուօք. հայցեմք ՚ի քէն. բա
րեխօսեա Ա̅ծածնիդ՝ զԱ̅ծայինն
լոյս քո ծագեա յանձինս մեր.

օրհնեմք ըզքեզ ՚ի յարութեն երեկոյիս ահաւոր թագաւոր։

եշ

Առաքեալք աստուծոյ. ընտրեալք ՚ի սկըզբանէ նախ քան զաշխարհս. որք արժանի եղէք տեսանել զաննատեսըն հրեղինաց. բարեխօսեցէք առ որ վասն մանկանց եկեղեցւոյ։ Բարեկամք քրիստոսի. հազարապետք աստուածայինըն խորհըրդոցն. որք ՚ի հոսանուտ մեղաց ծովէն վերածէք զմարդիկ ՚ի կեանս անմահ. բարեխօսե։ Գերագոյնք քան ըզ բնաւս. անճառելոյն հասէք երանութեն. որք ՚ի գալըստեան տեառըն նստջիք յերկոտասան աթոռսըն քրիստոսի. բարե։

ուր

Պարունակեալ պահէին յանեղաշէն դրախտին ըզ ճանապարհ ծառոյն կենաց. քրօբէական

Հոյլքըն բոցեղէն սրովբէիւք. այսօր առատափայլեալ ցուցմամբ յերկիր իջադարդ լոյս կենաց եւ փրկութեան.
զքեզ օրհնեն մանկունք
սուրբ եկեղեցւոյ։

Անբեկան ծառոյն վերաբերեալ խոյ յողջակէզ փոխանակ ի Սահակայ. այլ ի վերայ խաչին քո զենաւ գառն անարատ. ի հաշտութիւն հօր եւ ի քաւութիւն մեղաց մեր. զքեզ օրհնեն ման։

Պարծանք պօղոսեանն դաւանեալ ընդ քեզ աստուածային բանին տեղի եւ զենարան. քանզի քեւ փրկեալ ապրեցաք ի խաւարանոց եւ յանմահական դատաստանէն. եւ ի վերայ քո հեղեալ շիթք անապականն արեանն ընդ կողածակին
ջնջեաց ըզմեղս. զքեզ օրհ։

Երկնաւոր հօտ ընտրեալ. զոր հովիւն քաջ. թողեալ յերկինս.

Եւ եկեալ ՚ի խնդիր մեզ մոլորելոյս • որով լըցեալ զԹիւ հարիւրոյդ` • որոյ ուրախուի ՚ի յերկինս երկնաւորացդ` • աղաչեմք ըզ ձեզ բարեխօս լերուք առ տէր` վասըն քաւութեան մեղաց մերոց :

Տեսանօղք անտեսին` • խորհըրդածուք խորոցն աստուծոյ • որք իջեալք ընդ միածնին սպասաւորել տնօրէնութեանն` ՚ի ծնընդեանն աւետաւորք հովուացն • և կանանցն իւղաբերից` կենաց քարոզք ըզ կենդանւոյն` • աղաչեմք :

Պահապանք աշխարհի` • բանակեք տն շուրջ զերկիւղածովք • բարեկամք ազգի մարդկան` միջնորդք մահու և յարութեան` • միքայէլ և գաբրիէլ մեծք` • որ կայք միշտ առաջի ամենասուրբ Երրորդութեանն` • աղաչեմք ըզ :

գՀ

Երկնաւոր փեսայ. անստուեր լոյս իմանալի. որ ՚ի յերկնից իջեր. ՚ի սէր հարսին քո եկեղեցւոյ. զոր խօսեցաւ քեզ բարեկամն և փեսաւէրն քո յովհաննէս. սորին մաղթանօք ողորմեա.

Քառակերպիցն անհաս և անտես ՚ի սերոբէից. սրբութեամբ ոք և տէր բոլորից. խոնարհեցար ՚ի յորդանան գետն. հայցելով ՚ի ծառայէն. մաքրութիւն ջրոյ ՚ի լուանալ ըզ մեղս մարդկան. սորին մաղ.

Որ յանդորդութեամբ վկայեցաւ գառն աստուծոյ բարձող մեղաց. զոր գերագոյն մարգարէից. ծանուցեր մեծ ՚ի ծնունդս կանանց. և ճրագ օրհնեաց. որ և ՚ի դըժոխս ըզ փըրկական աւետիսն քո քարոզեաց. սորին մաղ.

Մաղթանք։

Հոգւոցն հանգուցելոց քոց ա՟ծ՝ տուր հանգիստ և ողորմութի. և մեզ մեղաւորացս՝ շնորհեա՛ զթողութի յանցանաց։

Քարոզ։

Եւ ևս խաղաղութե զտէր աղա՛՛։

Վ՟ն հանգուցել հոգւոցն աղաչեսցուք զփրկիչն մերք՟ս՝ զի զն՟ս ը՟ արդարսն դասեսցէ. և զմեզ կեցուսցէ շնորհիւ ողորմե իւրոյ։ Ամենակալ՛՛։

Աղօթք։

Ք՟ս որդի ա՟յ՝ անոխակալ և բարեգութ. գթա՛ քո արարչական սիրովդ ՚ի հոգիս հանգուցել ծ՟ռից քոց։ Յիշեա՛ յաւուր մեծի գալստեան արքայութե քո։ Որում արժանի ողորմութե. քաւութե և թողութե մեղաց։ Պատուորել պայծառացո՛ ը՟ ս՟բս քո յաջակողման դասուն։ Զի դու ես տ՟ր և արարիչ ա՟մ՟ցուն, դատաւոր կենդանեաց և մեռելոց։ Եւ քեզ վայելէ փառք՝ իշխանութի և պատիւ։ Այժմ և միշտ և յա՛՛։

Օրհնեալ տ՟ր մեր յ՟ս ք՟ս. ամէն։

Հայր մեր որ յերկինս ես՛՛։



Ի Թաբօր երիւք՝ եւ տէր մարմնա ցեալ․
յաղօթելն եղ՟ւ՝ այլակերպե ցեալ․
պետրոս մինչ խօսէր՝ ամպ հովանա ցեալ։
գայր անտի ձայն Հօր՝ Որդի սիրե ցեալ։

Կարգաւորուի̄ հասարակաց աղօթից հանգըստեան ժամուն։ Որ չափաւորի ՚ի դէմս Հօր ա̄յ։ Օ՟ի պահպանողական աջովն փառաճնեն պահեսցէ զմեզ ՚ի խաւարային գիշերի։

ԱՌԱՔԵԱ՛ ՏԷՐ ԶԼՈՅՍ *քո և զճշմարտութի̄ · քո զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն ս̄բ և՚ի յարկս քո։*

Մ̀տից առաջի սեղանոյ ա̄յ առ ա̄ծ · որ ուրախ առնէ զմանկութի̄ իմ։

Խոստովան եղէց քեզ օրհնութ̄բ ա̄ծ ա̄ծ իմ։

Ա՛րդ՝ ընդէ՞ր տրտումես անձն իմ · կամ ընդէ՞ր խռովես զիս · յուսա՛ առ ա̄ծ · խոստովանեսցո՛ւք նմա · փրկիչ երե̃ց իմ̃ց ա̄ծ է։

Փառք հօր և որդւոյ և″ · այժմ և″։

Եւ ես խաղաղութ̄ե զո̄ր առա″։

Օրհնութի̄ և փառք հօր և որ″։

Աղ

Եկեսցէ ՚ի վ՟ր իմ ողորմութ՟ի քո տ՟ր. եւ փրկութ՟ի քո ըստ բանի քում:

Տաց պատասխանի որք նախատեն զիս բանիւք. զի ես ՚ի բանս քո յուսացայ:

Մի՛ ՚ի բացեայ առներ ՚ի բերանոյ իմմէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ:

Պահեցից զօրէնս քո յամ՟ ժամ, յաւիտեան՝ եւ յաւիտեանս յաւիտենից:

Գնայի ես յանդորրու. զի զպատուիրանս քո խնդրեցի:

Խօսէի զվկայութ՟իս քո առաջի թագաւորաց, եւ ոչ ամաչէի:

Խորհէի ՚ի պատուիրանս քո, զոր սիրեցի: Համբարձի զձեռս իմ ՚ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի. եւ խորհէի յարդարութ՟ե քում.

Յիշեա՛ զբան ծառայի քո, յոր եւ յուսացուցեր զիս:

Սա մխիթարեաց զիս ՚ի խոնարհութ՟ե իմում. զի բան քո կեցոյց զիս:

Ամբարտաւանք անիրաւեցին յիս յոյժ, այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ:

Յի

Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից տէր, և մխիթարեցայ։

Տրտմութ̅ի կալաւ զիս ՚ի մեղաւորաց, և որք թողին զօրէնս քո։

Գովելի են ինձ իրաւունք քո, ՚ի տեղւոջ պանդխտութ̅ե իմոյ։

Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո տ̅ր. և պահեցի զօրէնս քո։

Սա եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս. զի զարդարութ̅իս քո խնդրեցի։

Զանօրէնս ատեցի, և զօրէնս քո սիրեցի։

Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես ՚ի բանս քո յուսացայ։

Ի բա՛ց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս ա̅յ իմոյ։

Օգնեա՛ ինձ ըստ բանի քում, և կեցո՛ զիս. և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ։

Օգնեա՛ ինձ, և ապրեցո՛ զիս. և խորհեցայց զիրաւունս քո յա̅մ ժամ։

Անարգեցեր զամենեսեան՝ որք ապստամբք եղեն յարդարութ̅եց քոց. զի անիրաւութ̅ք էին խորհուրդք ն̅ց։

Յան

Յանցաւորս համարեցայ զա̅մ մեղաւորս երկրի. վասն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո.

Բեւեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմին իմ, զի 'ի դատաստանաց քոց երկեայց յոյժ ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տէր. ըստ բանի քում իմաստուն արա զիս.

Մտցեն աղօթք իմ առաջի քո տէր. և բանիւ քով փրկեա՛ զիս.

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութի̅ս քո, յորժամ ուսուցես ինձ զարդարութի̅ս քո։ Խօսեսցի լեզու իմ ըզբանս քո. զի ա̅մ պատուիրանք քո արդարութե̅ են։

Եղիցի ձեռն քո 'ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Յանկացայ փրկութե̅ քում տէր. և օրէնք քո խօսք իմ էին.

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ. և իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես ո̅պ զոչխար կորուսեալ. խնդրեա՛ զծառայս քո, զի զպատուիրանս քո ես ո՛չ մոռացայ։

Մի՛ եկեսցեն 'ի վերայ մեր ոտք ամբարտաւանից. և ձեռք մեղաւորաց մի՛ դողացուսցեն զմեզ:

Անդ անկցին ա̃մքեան՝ որք գործեն զանօրէնութի̃. մերժեսցին և այլ մի՛ կարասցեն հաստատել:

Ես 'ի տէր յուսացայ. ցնծացոյց և ուրախ եղէց յա̃ծ փրկիչ իմ:

Տր̃ տր̃ ես ինձ զօրութի̃, և կացոյց զոտս իմ 'ի հաստատութե̃. 'ի վր̃ պարանոցի թշնամւոյն կացոյց զիս, և հանգոյց զիս երագ երագ:

Որ բնակեալն է յօգնութի̃ բարձրելոյն, ը̃ հովանեաւ ա̃յ յերկնից հանգիցէ:

Ասասցէ տն̃՝ ընդունող իմ ես. ապաւէն իմ ա̃ծ, և ես յուսամ 'ի նա:

Նա փրկեսցէ զիս յորոգայթէ որսողին, և 'ի բանից 'ի խռովութե̃:

'Ի թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. 'ի հովանի թևոց նր̃ յուսասցիս:

Ոպ̃ զէն շուրջ եղիցի զքև՝ ճշմարտութի̃ նր̃:

Ո՛չ երկիցես դու՝ յերկիւղէ գիշերի, և ոչ 'ի նետէ՝ որ թռչի 'ի տուէ:

Յիրէ որ շրջի 'ի խաւարի, 'ի գայթակղութէ դիւին 'ի հասարակ աւուր:

Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք, եւ բեւրք ընդ աջմէ քումմէ. եւ առ
քեզ ինչ ոչ մերձեսցին:

Բայց միայն աչօք քովք հայեսցիս դու, եւ զհատուցումն մեղաւորաց
տեսցես. զի դու տ̅ր յոյս իմ ես:

Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն, զի ոչ հասցեն առ քեզ չարք. եւ տանջանք մի մերձեսցին 'ի յարկս քո:

Հրեշտակաց իւրոց պատուիրեսցէ վ̅ս քո, 'ի պահել զքեզ յամ̅ ճանապարհս քո:

'Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ, զի մի երբէք հարցես զքարի զոտն քո:

'Ի վ̅ի իժից եւ քարբից գնասցես դու. եւ առ ոտն կոխեսցես զառիւծն եւ զվիշապն:

Քանզի յիս յուսացաւ, եւ փրկեցից զնա. հովանի եղէց նմա,
զի ծանեաւ զանուն իմ:

Կարդասցէ առ իս՝ եւ ես լուայց նմա.
եւ առ նմա եղէց 'ի նեղութե̅:

Փրկեցից եւ փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, եւ ցուցից նմա զփրկութի̅ իմ:

Առ քեզ տ̅ր համբարձի զաչս իմ. որ բնակեալդ ես 'ի յերկինս։

Որպէս աչք ծառայի 'ի ձեռն տ̅ն իւրոյ, և որպէս աչք աղախնոյ 'ի ձեռն տիկնոջ իւրոյ։

Նոյնպէս են աչք մեր առ քեզ տ̅ր ա̅ծ մեր, մինչև ողորմեսցիս 'ի վ̅ր մեր։

Ողորմեա՛ մեզ տ̅ր՝ ողորմեա՛ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք.

Առաւել լցան անձինք մեր նախատանօք, որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից։

Ա̅Ծ յանուա՛ն քում կեցո՛ զիս, և 'ի զօրութ̅ե քում իրա՛ւ արա ինձ.

Ա̅Ծ լո՛ւր աղօթից իմոց. ունկնդիր բանից բերանոյ իմոյ.

Օտարք յարեան 'ի վ̅ր իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ. և ո՛չ համարեցան զքեզ ա̅ծ առաջի իւրեանց։

Ահա՛ ա̅ծ օգնական իմ. և տ̅ր ընդունող հոգւոյ իմոյ։

'Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիսն իմ, ճշմարտութ̅բ քով սատակեա՛ զն̅ս։

Կամօք իմովք պատարագս մատուցի՛ց քեզ. և խոստովան եղէց անո՛ւան քում տէր, զի բարի է:

Ամ՟ նեղութ՟է իմմէ փրկեցեր զիս.
և 'ի թշնամիս իմ ետես ակն իմ:

Օրհնեալ ես դու տ՟ր ա՟ծ հարցն մերոց. գովեալ՝ և առաւել բարձրա՟ցլ անուն քո յաւիտեան: Եւ օրհնեալ է անուն ս՟բ փառաց քոց. գովեալ և″:

Օրհնել ես 'ի տաճարի փառաց սրբութեան քո. գովեալ և″:

Օրհ″ 'ի վ՟ր աթոռոյ արքայութ՟ե քո. գ″

Օրհնեալ ես որ նստիս 'ի քրովբէս՝ և հայիս յանդունդս. գո″:

Օրհ″ 'ի վ՟ր հաստատութ՟ե երկնից. գ″:

Օրհնեցէք զա՟ծ 'ի սրբութ՟ե ն՟ր. օրհնեցէ՛ք զնա 'ի հաստատութեան 'ի զօրութեան նորա:

Օրհնեցէ՛ք զնա 'ի զօրութ՟ե ն՟ր. օրհնեցէ՛ք զնա 'ի բազում մեծութ՟ե ն՟ր:

Օրհնեցէ՛ք զնա 'ի ձայն օրհնութ՟ե. օրհնեցէ՛ք զնա սաղմոսիւք և օրհնութ՟բ:

Օրհնեցէ՛ք զնա ցնծութ՟բ. գովեցէ՛ք զնա ուրախութ՟բ:

Օրհնեցէ՛ք զնա 'ի բանս քաղցր. գո‿

վեցէք զնա ՚ի բարբառ լսելիս։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութե՟.
ա՟մ հոգիք օրհնեցէք զտ՟ր։

Արդ արձակեա՛ զծառայս քո տէր՝ ըստ բանի քում ՚ի խաղաղութի՟. զի տեսին աչք իմ զփրկութի՟ քո զոր պատրաստեցեր առաջի ա՟մ ժողովրդեան։

Լոյս ՚ի յայտնութի՟ հեթանոսաց. և փառք ժողովրդեան քում իսրայէլի։

Ձգեցեր զձեռն քո՝ և փրկեաց զիս աջ քո. և տ՟ր հատուսցէ ընդ իմ։

Տ՟ր ողորմութի՟ քո յաւիտե՟ն զգործս
ձեռաց քոց մի՛ անտես առներ։

Տ՟ր՝ հա՛ն ՚ի բանտէ զանձն իմ. գոհա
նամ զանուանէ քումմէ։

Լու քեզ սպասեն արդարքն մինչև
հատուսցես։

Մեծացուսցէ անձն իմ զտ՟ր. և ցնծասցէ հոգի իմ ա՟վ փրկչաւ իմով։

Այց արար ՚ի վերայ խոնարհութե՟ աղախնոյ իւրոյ. այսուհետև երա
նիցեն ինձ ա՟մ ազգք։

Արար ընդ իս մեծամեծս հզօրն. և
ս՟բ է անուն նորա։

Ողորմութիւն արար ազգաց յազգս երկիւղածաց իւրոց. և արար զօրութիւն բազկաւ իւրով:

Ցրու́եաց զամբարտաւանս ՚ի մտաց սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց:

Զխոնարհս բարձրացոյց. զկարօտս ելից բարուբ̃. և զմեծատունս արձակեաց ունայնս:

Պաշտպանեաց իէ̃լի ծառայի իւրում՝ յիշելով զողորմութ̃ի իւր.

Ոպ̃ խօսեցաւ առ հարսն մեր՝ ընդ աբրահամու և զաւակի նր̃ յաւիտ̃ն:

Տո́ւր զօրութ̃ի ծառայի քո. կեցո́ զորդի աղախնոյ քո. և արա́ առ իս նշան բարութե̃.

Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն. զի դու տ̃ր օգնեցեր ինձ և մխիթարեցեր զիս: Փառք հօր և".

Մաղթանք:

Անձն իմ ՚ի ձեռս քո է յա̃մ ժամ. և ՚ի սբ̃ խաչ քո յուսացեալ եմ թագաւոր երկնաւոր. զբազմութ̃ի սբ̃ց քոց բարեխօս ունիմ առ քեզ: Որ երկայնամիտ ես առ ամենեսե̃ն՝

մի՛ անտես առներ զապաւինեալս ՚ի քեզ. այլ պահեա՛ պատուական և սբ խաչին քով ՚ի խաղաղութեան.

Քարոզ.

Աղաչեսցուք զամենակալն ած. և խնդրեսցուք ՚ի նմանէ զի առաքեսցէ զհրեշտակ խաղաղութեան որ եկեալ պահեսցէ զմեզ յերկիւղալից գիշերիս. ՚ի դիւական խռովութենէ ամբողջ պահելով զհոգի և զմարմին մեր մինչև ՚ի կատարումն ժմնկի ամաց մերոց. ամէն":

Օ հանգիստ գիշերիս խաղաղու":
Օ հրեշտակ: Օ քաւու. Օ սբյ:
Նաև ևս մի. Օ անձինս: Ողորմեա՛ց.

Աղօթք.

Տէր ած մեր դու պահեա՛ զմեզ խաղաղութբ ՚ի գիշերիս յայսմիկ և յամ ժամանակի. Ընդ մր երկիւղ քո բևեռեալ պահեա՛ զմիտս և զխորհուրդս մեր. Որպէս զի յամ ժամ քև պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն. Եւ քեզ հանցուք զօրհնութի և զփառս հօր և որդւոյ և":

Սու

Խաղաղութիւն Ամենեցուն։

Երջանիկ խաղաղութեան յանձն արա զանձինս մեր տ̅ր զօրութեանց։ Որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս 'ի տուէ և 'ի գիշերի. յարթնութեան և 'ի հանգստեան մերում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի։ Եւ այժմ աղաչեմք զքեզ տ̅ր ա̅ծ մեր՝ զհանգիստ գիշերիս շնորհեա խաղաղութեամբ անցուցանել. և հասանիլ 'ի պաշտօն առաւօտու յերկրպագութիւն և 'ի փառաբանութիւն ամենա̅սբ երրորդութեանդ. այժմ և"։

Սաղմոս, 4։

Խաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տ̅ր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։ Ի կարդալ իմում լուար ինձ ա̅ծ արդարութեան. 'ի նեղութեան ինձ անդորր արարեր. ողորմեա ինձ և լուր աղօթից իմոց։ Որդիք մարդկան՝ մինչև յերբ էք խստասիրտք. ընդէր սիրէք զունայնութիւն, և խնդրէք զստութիւն։ Ծանիրուք՝ զի սքանչելիս արար տ̅ր սրբոյ իւրում. և տ̅ր լուիցէ

ինձ

ինձ ՚ի կարդալ իմում առ նա։ Բարկանայք՝ և մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ՚ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարո՛ւք։ Մատուցէ՛ք պատարագս արդարուե՟. և յուսացարո՛ւք ՚ի տ՟ր։ Բազումք ասէին, թէ ո՛ ցուցցէ մեզ զբարուի՟ տ՟ն. նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց. և ետուր ուրախուի՟ սրտից մերոց։ ՚Ի պտղոյ ցորենոյ գինւոյ՝ և ձիթոյ իւրենց լցուցեր զն՟ս։ Խաղաղուե՟ յոյս և ՚ի նոյն ննջեսցուք և զարթիցուք. զի դու տ՟ր միայն առանձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։ Ալէ՟լուիա Օրթի՛։ Խաղաղութիւն Ամենեցուն։ Եւ ընդ հոգւոյդ քում

Երկիւղածուե՟ լո՛ւարուք։

Սբ՟ Աւետարան Յի՟ Քի՟ որ ըստ Յոհաննու։ Փա՛ռք քեզ տ՟ր ա՟ծ մեր։ Պռօսխո՛ւմէ։ Ասէ տ՟ր՛ ծ։ Տէրն մեր Յ՟ Ք՟ ասէ։

Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի։ Ինքն միայն կայ. ապա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ։

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. և որ ատեայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ՝ ՚ի կեանսն յաւիտենականս պահեսցէ զնա։ Եթէ ոք զիս պաշտեսցէ, զկնի իմ եկեսցէ. և ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի. եթէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ։

Փառք քեզ տէր Աստուած մեր.

քրզ Սրբով խաչիւն աղաչեսցուք զտէր՝ զի սովաւ փրկեսցէ զմեզ ՚ի մեղաց. և կեցուսցէ շնորհիւ ողորմութեան".

աղ Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած մեր ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո ՚ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յաներևոյթ թշնամւոյն։ Արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ Սրբոյ Հոգւոյդ. այժմ և".

Օրհնեալ տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն.

Հայր մեր որ յերկինս".

մաղ Ընկանիմք առաջի քո մայր Աստուածածին և աղաչեմք զանարատ զկոյսդ՝ բարեխօսեա վասն անձանց մերոց. և աղաչեա զմիածին որդիդ՝ փրկել զմեզ ՚ի փորձութենէ և յամենայն վտանգից մերոց.

Որ

Որ արձակիչդ ես կապելոց՝ պարգեւատու ամ̃ցուն. այսօր հայցմամբ ծերունւոյն՝ արձակեա՛ և զիս զբազմամեղս ՚ի կապանաց մահու ՚ի կենսան յաւիտենից:

Աղաչանք զօրաւորք ընդդէմ արհաւրաց գեհենայնոյ: Ասացեալ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն. ՂԲ

Ընկա՛լ քաղցրու̃բ՝ տ̃ր ա̃ծ հզօր, զդառնացողիս զաղաչանս. մատե՛ր գթութեամբ՝ առ պատկառեալս դիմօք. փարատեա՛ ա՛մենապարգև, զամօթական տխրութ̃իս. բա՛րձ յինէն՝ ո՛ղորմած, զանբերելի ծանրութիւնս. անջրպետեա՛ հընա՛րաւոր, զմահացու կրթութիւնս. աւարեա՛ մի՛շտ յաղթօղ, զխաբողին հաճութ̃իս. բացադրեա՛ վերնային, զմոլելոյն մառախուղ. կնքեա՛ կեցուցիչ. զկորուսչին ընթացմունս. ցրուեա՛ ծածկատես, զըմբռնողին չար գտմունս. խորտակեա՛ ա՛նքնիրն, զմարտողին դիմեցմունս: Տեառնագրեա՛ քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յարկիս · պարփակեա՛ քո ձռ̅մբդ՝ զառաստաղ տաճարիս · գծագրեա՛ քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս · կերպացո՛ զքո նշանդ՝ 'ի հետս ելից մաղթողիս · ամրացո՛ քո աջովդ՝ ըղ հանգստեանս խշտի · մաքրեսցե՛ս 'ի հաղբից՝ զծածկարան անկողնոյս · պահեսցե՛ս քո կամօքդ՝ զտառապեալ անձն հոգւոյս · անխարդախ արասցե՛ս՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս կացուսցե՛ս շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ · կարգեսցե՛ս 'ի դիմի՝ ը̄ դէմ դիմացն դասու ։ Տո՛ւր հանգիստ բերկրութե̄ մահահանգոյնս նիրհմանն 'ի խորութեան գիշերիս , բարեխօսութե̄ հայցուածոց սըրբոյ ա̄ծածնիդ՝ և ա̄մ ընտրելոց ։ Ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան տեսութե̄ց՝ զդայարանացս իմաստից՝ անզարհուրելի զետեղմամբ՝ 'ի ծփական խռովութե̄ց , կենցաղական զբաղմանց , անրջական երազոց , խոլականաց ցնորից , յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասելի պաշտպանել ։ Եւ սթափել փեսայ վերնոյին 'ի նմանէ ծանրութե՟ ամենազգաստ արթնութե՟, հոգենորոգ զուարթութե՟ 'ի քեզ արձանաց՟ը, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց քեզ՝ ամենօրհնե՟լ թգ՟ւոր փառաց անճառից, փ՟ռբանողաց երկնագուամբ խմբից երգակցեալ՝ յերկինս առաքել։ Ո՛վ դու փառաւորեալ ես յա՟մ արարածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Նորին սրբոյն Գրիգորի Նար՟. 41։

Որդի ա՟յ կենդանւոյ օրհնեալդ յա՟մ, հօրդ ահաւորի անքննելին ծնունդ. որ անկարանայ առ 'ի քէն և ո՛չ ինչ։ Որ 'ի ծագել անստուե՟ր նշուլից ողորմութե՟ քո փ՟ռց, հալին մեղք. հալածին դեւք. ջնջին յանցանք. խըզին կապանք. խորտակին շղթայք. կենդանածնին մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութի՟ք. տեղի տան տխրութի՟ք. նահանջին հեծութի՟ք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մուայլն. սպառի աղ ջամբուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնք. և թե՟ւուրէ ձեռն քո ամենակար՝ քաւիչդ ամ՟ի։ Որ ո՛չ եկիր կորուսանել զմարդկան հոգիս, այլ՝ կեցուցանել. թո՛ղ ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութ՟դ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին. ՚ի տարր գոյի՝ և յեզրս ծագաց Տ՟ր. ակնկալեն ամ՟ի՝ և յամ՟ի, ամ՟ լրմամբ օրհնեալ ՚ի բարձունս։ Եւ քեզ ընդ Հօր և Հոգւոյդ ս՟բյ վայելէ փառք՝ յաւիտեանս. ամէն։

* * *

Աղօթք իւրաքանչիւրոյ անձանց հաւատացելոց ՚ի Ք՟ս։ Որ արարեալ է տ՟ն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի։

Հաւատով խոստովանիմ՝ և երկրպագանեմ քեզ, Հա՛յր և Որդի և ս՟բ Հոգի. անեղ և անմահ բնութ՟ի. արարիչ հրշ՟տկաց և մարդկան և ամ՟ եղելոց. և ողորմեա՛ քո արարածոց, և ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ՝ և երկիրպագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս, միանական սբ՟ երրորդութի՟ և մի ած՟ութի՟, արարիչ լուսոյ՝ և հալածիչ խաւարի. հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց՝ և անգիտութե՟. և լուսաւորեա՛ զմիտս իմ՚ի ժամուս յայսմիկ՝ աղօթել քեզ ՚ի հաճոյս, և ընդունել ՚ի քէն զխնդրուածս իմ. և ողոր″.

Հայր երկնաւոր ած՟ ճշմարիտ, որ առաքեցեր զորդիդ քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս և առ՟ջի քո. ընկա՛լ զիս ոպ՟ զանառակ որդին, և զգեցո՛ ինձ զպատմուճանն զառ՟ջին՝ զոր մերկացայ մեղօք. և″։

Որդի՛ այ՟ ած՟ ճշմարիտ, որ խոնարհեցար ՚ի հայրական ծոցոյ՝ և առեր մարմին ՚ի սբ՟յ կուսէն մարիամայ, վս՟ մերոյ փրկութե՟. խաչեցար՝ թաղեցար և յարեար ՚ի մեռելոց, և համբարձար փառօք առ հայր. մեղայ յերկինս և առաջի քո. յիշեա՛ զիս ոպ՟ զաւազակն յորժամ գաս արքայութբ՟ քով. և″։

Հոգի՛ այ՟ ած՟ ճշմարիտ, որ իջեր ՚ի

յոր

յորդանան և 'ի վերնատունն, և լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւազանին. մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա զիս վերստին աստուածային հրով քով՝ որ հրեղէն լեզուօք սուրբ զառաքեալսն. և″։

Անեղ բնութիւն, մեղայ քեզ մտօք իմովք, հոգւով և մարմնով իմով. մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինս՝ վասն անուանդ քում սրբոյ. և ողոր″։

Տեսօղ ամենայնի, մեղայ քեզ խորհրդով բանիւ և գործով. ջնջեա զձեռագիր յանցանաց իմոց, և գրեա զանուն իմ 'ի դպրութեան կենաց. և ող″.

Քննօղ գաղտնեաց, մեղայ քեզ կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ. թողութիւն շնորհեա մեղաւորիս. զի 'ի ծննդենէ սուրբ աւազանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի աստուածութեան քո զգայարանօք իմովք, և ամենայն անդամօք մարմնոյս. և ողոր″։

Ամենախնամ տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայել յաղտ. և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս չարութեան. և բերանոյ

իմոյ

իմոյ ոչ խօսիլ զստու̅ն . և սրտի իմոյ ոչ խորհիլ զչարու̅ն . և ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւու̅ն . և ոտից իմոց . ոչ գնալ ՚ի ճանապարհս անօրէնու̅ե . այլ ուղղեա զշարժումն սոցա լինել միշտ ը̅ս պատուիրանաց քոց յա̅մի . և՛՛ ։

Հուր կենդանի ք̅ս , ընդ հուր սիրոյ քո զոր արկեր յերկիր , բորբոքեա յանձն իմ . զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ , և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց , և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ , և վառեսցէ զլոյս գիտութե̅ քո ՚ի սրտի իմում . և ողոր՛՛ ։

Իմաստու̅ն հօր յ̅ս , տուր ինձ իմաստու̅թի զբարիս խորհիլ՝ և խօսիլ՝ և գործել առաջի քո յա̅մ ժամ . ՚ի չար խորհրդոց՝ ՚ի բանից և ՚ի գործոց փրկեա զիս . և՛՛ ։

Կամեցօղ բարեաց տ̅ր կամարար , մի թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գընալ . այլ առաջնորդեա ինձ լինել միշտ ը̅ս կամաց քոց բարեսիրաց . և՛՛ ։

Արքայ երկնաւոր , տուր ինձ զարքայու̅թի քո , զոր խոստացար սիրե-

լեացքոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել
զմեղս, և սիրել զքեզ միայն, և առ-
նել զկամս քո. և ողոր″:

Խնամօղ արարածոց, պահեա՛ նշանաւ
խաչի քո՝ զհոգի և զմարմին իմ ’ի
պատրանաց մեղաց՝ ’ի փորձութ՟եց դի-
ւաց, և ’ի մարդոց անիրաւաց, և յա՟մ
վտանգից հոգւոյ և մարմնոյ. և″:

Պահապան ա՟մի քո՟, աջ քո հովանի
լիցի ’ի վ՟ր իմ ’ի տուէ և ’ի գիշերի.
’ի նստել ’ի տան, ’ի գնալ ’ի ճանա-
պարհ, ’ի ննջել և ’ի յառնել. զի մի եր
բէք սասանեցայց. և″:

Աստ՟ծ իմ, որ բանաս զձեռն քո, և լնուս
զա՟մ արարածս ողորմութ՟բ քով. քեզ
յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա
և պատ՟րաստեա զպէտս հոգւոյ և մարմ
նոյ իմոյ՝ յայսմ հետէ մինչև յաւ՟ն. և″:

Դարձուցիչ մոլորելոց, դարձո՛ զիս
’ի չար սովորութ՟եց իմոց ’ի բարի սովո
րութ՟ի. և բևեռեա՛ ’ի հոգի իմ զսոսկա
լի օր մահուան, և զերկիւղ գեհենին,
և զսէր արքայութ՟են. զի զղջացայց ’ի
մեղաց՝ և գործեցից զարդարութ՟ի. և″:

Աղբիւր անմահութե̅, աղբերացն՛ 'ի
սրտէ իմմէ զարտասուս ապաշխարու-
թեան՝ ոչ պտանէին. զի լուացից ընդ
մեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելա-
նելն իմ յաշխարհէս. ե″.

Պարգևի՛չ ողորմութե̅, պարգևեա՛
ինձ ուղղափառ հաւատով և բարի
գործով. և ը̅դ մարմնոյ և արեան քո
հաղորդութե̅ն գալ առ քեզ. ե″։

Բարերա՛ր տէր, հրեշտակի բարւոյ
յանձն արասցես զիս՝ քաղցրութե̅
աւանդել զհոգի իմ, և անխռով ան-
ցուցանել ընդ չարութիւն այսոցն՝
որք են 'ի ներքոյ երկնից. ե″։

Լոյս ճշմարիտ քս̅, արժանաւորեա՛ ընդ
հոգի իմ ուրախութ̅ե տեսանել զլոյս
փռ̅ց քոց 'ի կոչման աւուրն, և հանգ-
չել յուսով բարե̅ց յօթևանս արդա-
րոց՝ մինչև յօր մեծի գալստե̅ն քո. ե″։

Դատաւո՛ր արդար յորժամ գաս փա-
ռօք հօր՝ դատել զկենդանիս և ըզ
մեռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ը̅
ծառայի քում. այլ փրկեա՛ զիս 'ի յաւի-
տենական հրոյն, և լսելի՛ արա ինձ

զերանաւէտ կոչումն արդարոց՝ յերկնից արքայութ՟իդ. և ողոր"։

Ամենողորմ տ՟ր, ողորմեա ա՟մ հաւատացելոց ՚ի քեզ, իմոց և օտարաց՝ ծանօթից և անծանօթից՝ կենդանեաց և մեռելոց. շնորհեա և թշնամեաց իմոց և ատելեաց զթողութ՟ի՝ որ առիս յանցանաց. և դարձո զն՟ս ՚ի չարեացն, զոր ունին վ՟ս իմ. զի ողորմութ՟եդ քում արժանի եղիցին. և"։

